ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No 12-Լ «30» ապրիլի 2021

## 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՐՁԱՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԲՆԱԳԱՎԱՌԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԸ (5-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. 2021-2022 ուսումնական տարում ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում փորձարկելու նպատակով հաստատել «Հայագիտություն» բնագավառի փորձնական չափորոշիչը և ծրագրերը (5-12-րդ դասարաններ)՝ համաձայն հավելվածի:

Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

/պաշտոնակատար/

30.04.2021

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

**Հավելված**

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի**

**2021 թվականի ապրիլի -ի N իրամանի**

# «ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԲՆԱԳԱՎԱՌԻ

# ՓՈՐՁՆԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ

# (5-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)

«ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԲՆԱԳԱՎԱՌԻ 5-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ

## 1. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ՝ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ

«Հայագիտություն» բնագավառի նպատակը հայկական քաղաքակրթության վերաբերյալ պատմական համակարգված գիտելիքի ձևավորումն է: Առարկան նպաստում է պետականակիր գիտակցություն, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, սեփական ժողովրդի ու պետության դերակատարումը պատմության խորապատկերում գիտակցող քաղաքացու զարգացմանը, ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը:

Հիմնական (միջին) դպրոցում «Հայագիտություն» բնագավառի ուսուցման նպատակն է՝

- Հետազոտել հայկական քաղաքակրթության ձևավորման և զարգացման ընթացքը, ձեռքբերումներն ու բացթողումները:
- Համադրել և հակադրել պատմական իրադարձությունները, երևույթները, փաստերը, դրանց փոխկապակցվածությունն ու պատճառահետևանքային կապերը:
- Ցույց տալ հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությունը համաշխարհային քաղաքակրթության մեջ:
- Զարգացնել քննադատական մտածողությունը, հետազոտելու, աղբյուրների հետ աշխատելու, հաղորդակցվելու, վերլուծելու, գնահատելու, հարցադրումներ կատարելու, լսելու, քննարկելու, բանավիճելու, սեփական տեսակետներն ու դիրքորոշումները հիմնավորելու, որոշումներ կայացնելու կարողություններն ու հմտությունները:
- Ցույց տալ սերունդների կապը պատմության մեջ:
- Մեկնաբանել մարդկության պատմության ընթացքում տեղ գտած փոփոխությունները:
- Վելրլուծել պատմական գործընթացներում մարդու և շրջակա միջավայրի փոխազդեցությունը:
- Ծանոթանալ մշակութային բազմազանությանը:
- Հասկանալ անհատի, հասարակության և միջավայրի փոխազդեցության փոխկապակցվածությունը:
- Ձևավորել պատմական մտածողություն:
- Գործել որպես պատասխանատու քաղաքացի:

Միջնակարգ (ավագ) դպրոցում «Հայագիտություն» բնագավառի ուսուցման նպատակն է՝

- Տարանջատել հայոց պատմության առանցքային շրջափուլերը, որոնք ազդեցություն են ունեցել հայոց պատմության զարգացման ուղիների վրա:
- Վերլուծել պատմական զարգացումների խորքային պատճառները:
- Բացահայտել պատմական գործընթացների պատճառահետևանքային կապերը, առօրեական կյանքի առանձնահատկությունները :
- Վերլուծել տնտեսական համակարգերի առանձնահատկությունները, դրանց արտացոլումը հասարակական-քաղաքական զարգացումների վրա:
- Հետազոտել հայ իրականության մեջ ընկերային կյանքի առանձնահատկությունները, ներկայացնել դրանք համաշխարհային զարգացումների համատեքստում:
- Ըմբռնել պետական կառավարման համակարգի և հայ հասարակական-քաղաքական մտքի փոխակերպումները:

- Վերլուծել Հայոց պատմության առանցքային խնդիրների պատճառահետևանքային կապերը, մատնանշել լուծման հնարավոր տարբերակները:
- Ձևավորել վերաբերմունք՝ ուղղված սեփական պետության, մշակույթի, պատմության և ապագայի տեսլականին:

## 2. ԱՌԱՐԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն նրա անցած ուղին է, կենսագրությունն ու հիշողությունը, դարերի հոլովույթում նրա կերտած հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը: Այն քաղաքացու, հասարակության և պետության ապագա գործունեության հիմքն է: Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն ունի իր յուրահատուկ դերակատարումը համաշխարհային քաղաքակրթության պատմության հոլովույթում: Դրանով է կանխորոշվում անձի, քաղաքացու և պետության դերակատարումը համաշխարհային գործընթացներում:

Բնագավառի իմացության միջոցով է ձևավորվում ազգային ինքնագիտակցություն ու մտածողություն, պատասխանատու և սեփական տեսակետ ու դիրքորոշում ունեցող, կշռադատված որոշումներ կայացնող անձ ու քաղաքացի:

Դասընթացները նպաստում են իր ինքնությունն ու քաղաքակրթությունների արժեհամակարգերը ճանաչող անհատի ձևավորմանը, որն էլ միտված կլինի իր գործունեությամբ նպաստելու հայ և համաշխարհային հասարակության զարգացմանն ու վերափոխմանը՝ այն սկսելով իր անձից և իր սոցիալական ու բնական միջավայրից: Ուսումնասիրելու է աշխարհին ու տարբեր քաղաքակրթություններից ստացած ժառանգությունն ու դրանց ազդեցությունը մեր օրերի վրա:

«Հայագիտություն» բնագավառի շնորհիվ է սովորողը տեղեկանում իր նախնիների անցած պատմական ուղուն: Բնագավառը ներառում է հիմնական դպրոցի V-XII դասարաններում ուսումնասիրվող. «Իմ հայրենիքը»՝ (V դասարան), «Իմ հայրենիքն ու աշխարհը»՝ (VI դասարան), «Հայոց պատմություն»՝ (VII-XII) դասարաններ առարկաները: V դասարանի «Իմ հայրենիքը» առարկան ընդգրկում է հայ ժողովրդի ծագումնաբանությունը, մեծ ու փոքր հայրենիքի մասին ընկալումները՝ զուգորդելով հենց իր բնակատեղի ապրելատեղի քարտեզը գծելով, այնուհետև ճանաչելով իր հայրենիքը՝ ամբողջության մեջ և աշխարհի հետ հարաբերության մեջ՝ ազգային կենցաղը, խոհանոցը, մշակույթը, էպոսը, առասպելներն ու ավանդապատումները, պատմական կարևոր իրադարձությունները, դեմքերն ուսումնասիրելով: VI դասարանի «Իմ հայրենիքն ու աշխարհը» առարկան ընդգրկում է քաղաքակրթությունների պատմության հնագույն շրջանը՝ ներառելով քաղաքական, տնտեսական, մշակութային և սոցիալական պատմությունը: VII-IX դասարանների «Հայոց պատմություն» առարկայի ծրագիրն ընդգրկում է Հայաստանի և հայ ժողովրդի՝ Ք.ծ.ա. III հազարամյակից մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածի պատմությունը: Դասընթացի ուսումնառությունը կառուցված է հետևյալ սկզբունքով. ծագումնաբանությունից ու առասպելներից մինչև էպիկական պատումներ, այնուհետև իրական պատմական կերպարներ, իրադարձություններ ու պատմություն:

Հիմնական դպրոցում սովորողները հայոց պատմության ծրագրի շրջանակներում կծանոթանան հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի ունեցած դժվարություններին ու կորուստներին:

## 3. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

### 3.1. Հանրակրթական հիմնական ծրագրի հայագիտություն բնագավառի վերջնարդյունքները

5.1.1. Նկարագրի իր բնակության վայրը, պետությունը, հայոց հայրենիքը, նրա աշխարհագրական դիրքը, սահմանները, պատմաաշխարհագրական միջավայրը:
5.1.2. Ներկայացնի հայրենիքի խորհրդանիշները:
5.1.3. Ուսումնասիրի և մեկնաբանի զանազան քարտեզներ՝ զարգացնելով հետազոտական հմտություններ:
5.1.4.Կիրառի քարտեզներ ժամանակի և տարածության մեջ կողմնորոշվելու համար:
5.1.5. Մեկնաբանի տարբեր քարտեզներ, տարբերակի դրանք:
5.1.6. Ձևավորի հոգատար վերաբերմունք իր ընտանիքի, ազգի պատմամշակութային ձեռքբերումների նկատմամբ:
5.1.7. Ուսումնասիրի և մեկնաբանի զանազան քարտեզներ՝ ձևավորելով հետազոտական հմտություն:
5.2.1. Ներկայացնի և մեկնաբանի Հայկական լեռնաշխարհի բնակիչների ավանդական զբաղմունքը, առօրյա կյանքն ու կենցաղը, նյութական և հոգևոր մշակույթի բաղադրիչները (մշակույթը և կենցաղը, ազգային տարազը, խոհանոցը, կիրառական արվեստը), ավանդույթները, տոներն ու ծեսերը:
5.2.2. Վերլուծելով հայ ժողովրդի ծագումնաբանությունը, մշակույթը, տոներն ու ավանդապատումները՝ ներկայացնի դրանց ազդեցությունը իր ինքնության ձևավորման վրա:
5.2.3. Զարգացնի հոգատար և հարգալից վերաբերմունք սեփական ժողովրդի հոգևոր և նյութական մշակույթի նկատմամբ:
5.2.4. Վերլուծի տեղանքի ու իրադարձությունների, պատմաաշխարհագրական տեղանունների հետ կապված ավանդապատումները:
5.2.5. Գնահատի ազգային հոգևոր-մշակութային արժեքները՝ որպես համամարդկային արժեքներ:
5.2.6. Ծանոթանա Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների ավանդական մշակույթին ու կենցաղին:
5.2.7. Վերլուծի և մեկնաբանի հայոց ծագումնաբանությունը և ավանդազույցները՝ ձևավորելով ստեղծագործական հմտություն:
5.3.1. Գնահատի խաղաղասիրությունը, արդարությունը, փոխադարձ հարգանքը և ընկերասիրությունը:
5.3.2. Ճանաչի պատմական և մշակութային գործիչներին ու նրանց գործունեությունը:
5.3.3. Կիրառի վարքային կանոնները, ձևավորի հոգատար և պատասխանատու վերաբերմունք իր ու շրջապատի նկատմամբ:
5.3.4. Գնահատի մարդկանց սիրո, համերաշխության, խոնարհության, օգնելու, փոխադարձ հարգանքի, ազատության և հավասարության վրա հիմնված մարդկային հարաբերությունները:
5.3.5. Գնահատի քրիստոնեական արժեհամակարգի դրսևորումները տարբեր հասարակություններում (սկսած միջնադարից):
5.3.6. Ուսումնասիրի նախաքրիստոնեական և քրիստոնեական արժեհամակարգերի ընդհանրություններն ու առանձնահատկությունները հայ իրականության մեջ:
5.3.7. Զարգացնի վերլուծական մտածողությունը համեմատությունների և քննարկումների միջոցով:
5.4.1. Վերլուծի և քննարկի «Սասունցի Դավիթ» էպոսում ներկայացված արժեհամամակրգերը:

5.4.2. Համեմատի և հակադրի այլ ժողովուրդների էպոսներում ներկայացված արժեհամակրգերը «Սասունցի Դավիթ» էպոսի հետ:
5.4.3. Համագործակցային աշխատանքի միջոցով տարբերակի էպոսի հերոսների գործունեությունը և արժեհամակարգը:
5.4.4. Մեկնաբանի Էպոսի հերոսների արժեքները և մեկնաբանության հիման վրա ձևավորի հայրենասիրության և արդարամտության արժեհամակարգը:
5.4.5 Սեփական շրջապատի՝ ընկերների, ընտանիքի, համայնքի ներկայացուցիչների վարքի ուսումնասիրության հիման վրա ներկայացնի այն արժեհամակարգերը, որոնք առկա են հայոց էպոսում:
5.5.1. Ուսումնասիրի անհատի ունեցած ազդեցությունը հայ հասարակության վրա:
5.5.2. Վերլուծի անհատի ունեցած դերը հասարակության զարգացման տարբեր բնագավառներում:
5.5.3. Քննի անհատի գործունեությունը հասարակության զարգացման տարբեր ոլորտներում՝ ձևավորելով քննական մտածողություն:
5.5.4. Գնահատի անհատի ունեցած դերը հասարակության կյանքում՝ ձևավորելով հարգալից վերաբերմունք նորարարություն արժեհամակարգի վերաբերյալ:
6.1.1. Մեկնաբանի իր կյանքից կամ ընտանիքի անդամների կյանքից իրավիճակներ, որոնք հանդիսանում են պատմության մի մաս:
6.1.2. Բացատրի պատմական տարբեր եզրույթները՝ ներկայացնելով դրանց ճիշտ կիրառումը:
6.1.3. Ուսումնասիրի և վերլուծի տարբեր իրավիճակներ իր կամ ընտանիքի կյանքից որպես պատմության մաս՝ ձևավորելով հետաքրքրասիրություն «Պատմություն» առարկայի նկատմամբ:
6.1.4. Մեկնաբանի պատմության ուսումնասիրման անհրաժեշտությունը՝ անցկացնելով հարցումներ իր ընտանիքի կամ շրջապատի մարդկանց կյանքի և գործունեության վերաբերյալ:
6.2.1. Ուսումնասիրի նախնադարյան հասարակությունները, դրանց առաջացման, ձևավորման և զարգացման գործընթացները, համեմատի և համադրի այդ հասարակությունները արդի հասարակությունների հետ՝ վերհանելու պատմական զարգացման գործընթացներն ու ձեռքբերումները:
6.2.2. Մեկնաբանի նախնադարյան հասարակությունները, ձևավորի գիտելիքահեն մտածողություն մարդկության ունեցած ձեռքբերումների վերաբերյալ:
6.2.3. Վերլուծի պատմական աղբյուրներն ու տեքստերը նախնադարյան մարդու գործունեություն վերաբերյալ, զարգացնի ստեղծագործական-վերլուծական հմտությունը:
6.2.4. Կազմի համեմատական վերլուծական շարադրանք նախնադարյան մարդու և ներկայիս մարդու առօրյա գործունեության վերաբերյալ:
6.3.1. Վերլուծի աշխարհի և Հայկական լեռնաշխարհի հնագույն քաղաքակրթությունները, դրանց ձևավորման ու զարգացման ընթացքը, համեմատի միմյանց հետ, գնահատի դրանց ազդեցությունը մեր օրերի վրա:
6.3.2. Վերլուծի և համակարգի հնագույն քաղաքակրթոյթունների ձեռքբերումները. քաղաքական, տնտեսական, մշակութային, հասարակական:
6.3.3. Ուսումնասիրի հին քաղաքակրթությունները և դրանց կողմից ժամանակակից մարտահրավերները հաղթահարելու գործընթացները, ձևավորի բանիմաց արժեհամակարգ մարտահրավերներ արժեհամակարգի վերաբերյալ դիտարկելով այն որպես հասարակության զարգացման կարևոր բաղադրիչ:
6.3.4. Ուսումնասիրելով հնագույն քաղաքակրթություններին վերաբերվող զանազան աղբյուրները՝ ձևավորի հետազոտական հմտություն:

6.3.5. Ուսումնասիրելով իր համայնքը՝ հավաքագրի և ամբողջացնի հնագույն քաղաքակրթությունների ձեռքբերումները, որոնք հիմք են հանդիսացել իր համայնքի գործունեության համար:
6.4.1. Ուսումնասիրի Հին աշխարհի հավատալիքների համակարգը և դրանց դերակատարումը հին հասարակությունների կյանքում:
6.4.2. Ուսումնասիրի տարբեր երկրների և մշակույթների հավատալիքների համակարգը, ձևավորի բանիմաց արժեհամակարգ ստեղծարարություն վերաբերյալ:
6.4.3. Ուսումնասիրի տարբեր երկրների հավատալիքների համակարգը, ձևավորի վերլուծական հմտություն՝ համեմատելով և համադրելով դրանք:
6.4.4. Հարցում կանցկացնի իր համայնքում և կհավաքագրի ու կներկայացնի այն մշակութային հավատալիքները, որոնք առկա են իր համայնքում:
6.5.1.Հետազոտի և վերլուծի տարբեր ժամականերում և հասարակություններում կիրառվող նորարարությունները և նորարար գաղափարները, արժևորի դրանց դերը հասարակության և անհատի կյանքում:
6.5.2. Ուսումնասիրի տարբեր ժամականերում և հասարակություններում կիրառվող նորարարությունները և նորարար գաղափարները, ձևավորի գիտակից վերաբերմունք նորարարության և արդիականության վերաբերյալ:
6.5.3. Քննության ենթարկի տարբեր գաղափարները և նորարարությունները, ստեղծի իր տարբերակը:
6.5.4. Ուսումնասիրի իր համայնքը և վեր հանի այն գաղափարները, որոնք առկա են և փոխել են իր համայնքը:
7.1.1. Վերլուծի և քննի Ք.ա. III-I հազ. հայկական քաղաքակրթության ձևավորման, զարգացման և անկման պատմական գործընթացները:
7.1.2. Ուսումնասիրի Ք.ա. III-I հազ. հայկական քաղաքակրթության գործունեությունը՝ ձևավորելով գիտելիքահեն մտածողություն առաջնորդութան վերաբերյալ
7.1.3. Հետազոտի և ձևավորի պատմական աղբյուրներ ընթերցելու և վերլուծելու հմտություն:
7.1.4. Ուսումնասիրի իր համայնքը և ներկայացնի, թե Ք.ա. III-I հազ. հայկական քաղաքակրթության շրջանից մնացած հուշարձանները ինչ ազդեցություն ունեն իր կյանքում:
7.2.1. Ուսումնասիրի Հայկազունի Երվանդունիների թագավորության ձևավորման և զարգացման գործընթացները, ունեցած ձեռքբերումները, ներդրումը հայ ժողովրդի պատմության մեջ:
7.2.2. Ուսումնասիրի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր թագավորության հաղթահարած մարտահրավերների վերաբերյալ՝ ձևավորելով գիտելիքահեն մտածողություն մարտահրավերները հաղթահարելու համար:
7.2.3. Ձևավորի զանազան վստահելի պատմական աղբյուրներ և տեքստեր որոնելու հմտություն:
7.3.1. Ուսումնասիրի Հայկական թագավորությունների ձևավորման, զարգացման, անկման քաղաքական, տնտեսական, մշակությանին պատմությունը, դիտարկելով համաշխարհային պատմության հոլովույթում:
7.3.2. Ուսումնասիրի Հայկական թագավորությունների պատմությունը և արքայատոհմերի ունեցած կարևոր ներդրումը ոչ միայն տարածաշրջանում, այլ նաև հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի բնագավառներում, կձևավորի բանիմաց վերաբերմունք առաջնորդություն արժեհամակարգի վերաբերյալ:
7.3.3. Ընթերցի և կիրառի ԾՆԱՍ մոդելը, ձևավորի պատմական տեքստերը ընթերցելու և վերլուծելու համակարգված հմտություն:
7.4.1. Ուսումնասիրի I-V դարերի հայ ժողովրդի պատմությունը, վերլուծելով միջազգային իրադրությունը, կատարի անդրադարձ դրաձո թագավորների գործունեությանը, նոր

արքայատոհմի հաստատմանը, զարգացմանը և անկմանը. Արշակունյաց արքայատոհմի ունեցած պատմական նշանակությունը հայ ժողովրդի կյանքում:
7.4.2. Ուսումնասիրի այս ժամակաշրջանի հայ ժողովրդի պատմությունը, ձևավորի բանիմաց վերաբերմունք հաստատակամություն արժեհամակարգի վերաբերյալ, որը ուներ հայ ժողովուրդը իր անկախ պետականությունը վերականգնելու համար մղվող պայքարում դրածո թագավորների օրոք, Արշակունյաց թագավորները և սպարապետները հայրենիքի անկախության և կրոնական ինքնության պահպանման համար մղված պայքարում:
7.4.3. Ընթերցի և դասընկերների հետ գրավոր ու բանավոր աշխատանքների միջոցով վերլուծի, քննարկի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր՝ ձևավորելով վերլուծական հմտություն:
7.5.1. Ուսումնասիրի V-IX դդ. հայ ժողովրդի պատմությունը՝ անդրադառնալով Արշակունյաց արքայատոհմից հետո հաստատված նախարարական կառավարման համակարգի գործունեությանը, հայ ժողովրդի կրոնական ինքնությանը սպառնացող վտանգներին և լուծման ուղիներին, միջազգային իրավիճակի փոփոխությանը և դրա հետևանքների դրսևորումներին հայ ժողովրդի կյանքում միասնական պետականության բացակայության պայմաններում նորարար մշակութային ինքնության ձևավորմանը:
7.5.2. Ուսումնասիրելով տվյալ ժամանակաշրջանի հայ ժողովրդի պատմությունը՝ ձևավորի բանիմաց վերաբերմունք հնարամտություն արժեհամարգի վերաբերյալ, որը դրսևորվեց հայ ժողովրդի պատմության տվյալ ժամակաշրջանում և՛ քաղաքական, և՛ մշակութային բնագավառներում:
7.5.3. Հետազոտի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր հայ ժողովրդի պատմության տվյալ շրջափուլի վերաբերյալ, վերլուծի և ձևավորի խնդիրներ լուծելու հմտություն՝ ուսումնասիրելով նշված ժամանակահատվածում առաջացած խնդիրների լուծումների օրինակները:
7.6.1 Ուսումնասիրի V-IX դարերի մշակույթի զարգացման ընթացքը, ուղղությունները, բնագավառները, ձեռքբերումները, մշակութային գործիչներին ու նրանց ստեղծագործությունները:
7.6.2. Բացատրի գրերի գյուտի պատմական նշանակությունը:
7.6.3. Արժևորի ոսկեդարյան մշակույթի ձեռքբերումները հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում:
7.6.4. Ուսումնասիրի քրիստոնեական ազգային մշակույթը՝ ձևավորի բանիմաց վերաբերմունք առաքինություն արժեհամակարգի վերաբերյալ:
7.6.5. Ուսումնասիրի գրավոր և բանավոր զանազան պատմական, աստվածաբանական աղբյուրներ և տեքստեր համագործակցային աշխատանքների միջոցով՝ ձևավորի համագործակցելու հմտություն:
7.6.6. Ուսումնասիրի իր համայնքը և ներկայացնի համայնքի այն ներկայացուցների գործունեությունը, որը ըստ աշակերտի համարվում է առաքինի:
7.7.1. Ուսումնասիրի Բագրատունյաց թագավորության հաստատման, զարգացման և անկման գործընթացները, համաշխարհային և տեղական պատմական մի շարք գործընթացների պատճառահետևանքային կապերը, թագավորության ունեցած ներդրումը պատմության մեջ:
7.7.2. Վերլուծի Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում հայ ժողովրդի ունեցած ձեռքբերումները, ձևավորի իմացություն «ձեռքբերում» արժեհամակարգի վերաբերյալ:
7.7.3. Հետազոտի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր՝ ձևավորի համակարգային վերլուծական հմտություն պատմական աղբյուրներ և տեսքտեր ընթերցելու վերաբերյալ:
7.8.1. Ուսումնասիրի XI-XIV դարերում տարածաշրջանում հաստատված աշխարհաքաղաքական իրադրությունը, պատմական կարևոր գործընթացները, որոնք տեղի ունեցան տվյալ ժամակաշրջանում և իրենց ազդեցությունը թողեցին հայ ժողովրդի պատմական զարգացման ընթացքի վրա:

7.8.2. Վերլուծի տարբեր պատմական աղբյուրներ՝ ձևավորի բանիմաց վերաբերմունք հաստատակամություն արժեհամակարգի վերաբերյալ:
7.8.3. Ձևավորի պատմական աղբյուրները հետազոտելու և վերլուծելու հմտություն:
8.1.1. Ուսումնասիրի Կիլիկիայի հայկան պետականության ձևավորման, զարգացման և անկման գործընթացները, պատճառահետևանքային կապերը:
8.1.2. Ուսումնասիրի տվյալ ժամակաշրջանի վերաբերյալ զանազան պատմական աղբյուրները և տեքստերը, ձևավորի բանիմաց վերաբերմունք կարողություն հասկացություն վերաբերյալ, որը օգնեց Հայկական լեռնաշխարհից հեռու հայ իշխաններին ու բնակչությանը ստեղծել մի նոր պետություն:
8.1.3. Հետազոտի հայ իշխանների և թագավորների գործունեությունը և վերլուծի այն խնդիրները և լուծումները, որոնց առնչվում էին հայ իշխանները ու թագավորները՝ ձևավորելով խնդիրներ լուծելու հմտություն:
8.2.1. Նկարագրի տարածաշրջանի քաղաքական դրությունը, Հայաստանի ներքին և արտաքին իրավիճակը XV-XVII դդ. ընկած ժամանակահատվածում:
8.2.2. Բացատրի հարաբերությունները հարևան և աշխարհի երկրների, ժողովուրդների հետ, ուրվագծի հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքային տարբերակներ և կանխատեսի դրանց հետևանքները:
8.2.3. Ուսումնասիրի հայ ժողովրդի XV-XVII դդ. պատմությունը, ձևավորի բանիմաց վերաբերմունք հաստատակամություն արժեհամակարգի նկատմամբ, որը առաջնորդում էր հայ ժողովրդին այս ժամանակաշրջանում պետականությունը վերականգնելու ճանապարհին:
8.2.4. Զույգերով կամ թիմերով ուսումնասիրի և վերլուծի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր՝ ձևավորելով համագործակցային հմտություն:
8.3.1. Նկարագրի տարածաշրջանի քաղաքական դրությունը, Հայաստանի ներքին և արտաքին իրավիճակը XVIII դարում:
8.3.2. Բացատրի հարաբերությունները հարևան և աշխարհի երկրների, ժողովուրդների հետ, ուրվագծի հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքնային տարբերակներ և կանխատեսի դրանց հետևանքները:
8.3.3. Ուսումնասիրի հայ ժողովրդի XVIII դ. պատմությունը, ձևավորի բանիմաց վերաբերմունք հաստատակամություն արժեհամակարգի նկատմամբ, որը առաջնորդում էր հայ ժողովրդին այս ժամանակաշարջանում պետականությունը վերականգնելու ճանապարհին:
8.3.4. Զույգերով կամ թիմերով ուսումնասիրի և վերլուծի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր՝ ձևավորելով համագործակցային հմտություն:
8.4.1. Նկարագրի տարածաշրջանի և Հայաստանի ներքաղաքական ու արտաքին քաղաքական իրավիճակը XIX դարում:
8.4.2. Բացատրի հարաբերությունները հարևան և աշխարհի երկրների, ժողովուրդների հետ, ուրվագծի հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքնային տարբերակներ և կանխատեսի դրանց հետևանքները:
8.4.3. Ուսումնասիրի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր, ձևավորի բանիմաց վերաբերմունք ազատություն արժեհամակարգի վերաբերյալ, որն առաջնորդում էր հայ ժողովրդին իր պայքարի ճանապարհին:
8.4.4. Զույգերով կամ խմբերով ուսումնասիրի և վերլուծի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր՝ ձևավորելով համագործակցելու հմտություն:
8.5.1. Նկարագրի և բացատրի հայկական գաղթավայրերի ձևավորման պատճառները, համեմատի տարբեր գաղթավայրերի զարգացման առանձնահատկությունները, գաղութահայ հիմնական կենտրոնները, դրանց առջև ծառացած խնդիրները, գնահատի գաղթավայրերի և

Հայոց եկեղեցու առանձնահատուկ դերը գաղթավայրերում հայապահպանության և հայկական մշակույթի պահպանման ու զարգացման գործում:
8.5.2. Ներկայացնի և համեմատի տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, արդյունքներն ու հետևանքները, հետևություններ անի հայոց և համաշխարհային պատմական իրադարձությունների փոխկապակցվածության վերաբերյալ, կապեր գտնի արդի պատմական գործընթացներում առկա կարևոր իրադարձությունների և երևույթների հետ:
8.5.3. Ներկայացնի և համեմատի Մայր հայրենիքում և գաղթավայրերում ազգային մշակույթի զարգացման նախադրյալները, պայմանները, ընդհանրություններն ու առանձնահատկությունները, օրինաչափությունները, կենտրոնները, գիտության, արվեստի կարևոր բնագավառները:
8.5.4. Ներկայացնի և արժևորի Մայր հայրենիքում և տարբեր գաղթավայրերում ազգային մշակույթի ձեռքբերումները հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում, գիտակցի ազգային արժեքները պահպանելու, զարգացնելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը:
Ճանաչի տվյալ ժամանակաշրջանի ակնառու գործիչների, բնութագրի, համեմատի և գնահատի նրանց գործունեության առանցքային դրվագները:
8.5.5. Վերլուծի և գնահատի գրատպության, հայ գրքի, հայ մամուլի, կրթական նշանավոր հաստատությունների դերն ու ազդեցությունը հայ մշակութային, քաղաքական, հասարակական կյանքում, ներկայացնի և քննարկի մշակութային գործիչների ստեղծագործություններից որոշ հատվածներ:
8.5.6.Գնահատի Հայոց եկեղեցու և Մխիթարյան միաբանության դերը հայկական մշակույթի, հայագիտության և գիտության տարբեր ճյուղերի զարգացման ու ազգային մշակույթի պահպանման գործում
8.5.7.Նկարագրի սոցիալ-տնտեսական կյանքի, հասարակական միջավայրի, հասարակական հարաբերությունների առօրյա կյանքի ու կենցաղի առանձնահատկությունները գաղթօջախներում, բացատրի դրանց նմանություններն ու տարբերությունները, կապեր գտնի իր ներկա կյանքի հետ:
8.5.8.Կապեր գտնի տվյալ ժամանակաշրջանի ու արդի մշակութային ձեռքբերումների միջև, ցույց տա իր և սերունդների կապը պատմության մեջ, ըմբռնի մշակույթի շարունակականության կարևորությունը և մշակութային ժառանգորդության յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:
8.5.9.Բացատրի կարևոր եզրույթներն ու հասկացությունները, օգտագործի ըստ անհրաժեշտության:
9.1.1. Նկարագրի տարածաշրջանի և համաշխարհային քաղաքական իրադրությունը. Հայաստանի իրավիճակը XX դարի սկզբին:
9.1.2. Բացատրի հարաբերությունները հարևան և աշխարհի երկրների, ժողովուրդների, միջազգային տարբեր միությունների, կազմակերպությունների հետ, գտնի արդի աշխարհի հետ որոշ կապեր, առաջարկի հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքային տարբերակներ, կանխատեսի դրանց հետևանքները:
9.1.3. Ուսումնասիրի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր, կձևավորի բանիմաց վերաբերմունք հաստատակամություն արժեհամակարգի վերաբերյալ, որն ուղղորդում էր հայ ժողովրդին ինքնությունը պահպանելու ճանապարհին:
9.1.4. Ուսումնասիրի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր և վերլուծելով դրանք կձևավորի վերլուծական քննական մտածողություն:
9.2.1.Նկարագրի աշխարհաքաղաքական իրադրությունը, Հայաստանի և տարածաշրջանի ներքաղաքական և արտաքին քաղաքական իրավիճակը 1918-1920 թթ., տարածքային հիմնախնդիրները,

9.2.2. բացատրի հարաբերությունները հարևան և աշխարհի երկրների, ժողովուրդների, միջազգային տարբեր միությունների, կազմակերպությունների հետ, առաջարկի հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքային տարբերակներ, կանխատեսի դրանց հետևանքները:
9.2.3. Ուսումնասիրի տվյալ ժամանակաշրջանի վերաբերյալ պատմական աղբյուրները և իրադարձությունները, ձևավորի բանիմաց վերաբերմունք պետականության արժեհամակարգի վերաբերյալ, որը ձևավորեց հայ ժողովուրդը հարյուրամյակներ պետականություն չունենալուց հետո:
9.2.4. Զույգերով, խմբերով ուսումնասիրի և վերլուծի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր՝ ձևավորելով համագործակցելու հմտություն:
9.3.1. Հետազոտի Հայաստանի խորհրդայնացման գործընթացը, Խորհրդային Հայաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային և սոցիալական զարգացումները:
9.3.2. Ուսումնասիրի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր, վերլուծի այն ձեռքբերումները, որոնք ստեղծվեցին և տեղի ունեցան Խորհրդային Հայաստանի տարիների:
9.3.3. Ուսումնասիրի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր տարբեր մեդիա հարթակներից՝ ձևավորելով հետազոտական հմտություն:
9.4.1. Նկարագրի Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական և ներքաղաքական իրավիճակը արդի շրջանում:
9.4.2. Բացատրի հարաբերությունները հարևան և աշխարհի երկրների, ժողովուրդների, միջպետական տարբեր միությունների, կազմակերպությունների հետ, գտնի արդի աշխարհի հետ բազմատեսակ կապեր, առաջարկի հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքային տարբերակներ, կանխատեսի դրանց հետևանքները:
9.4.3. Ներկայացնի և բացատրի անկախացման և պետականաշինության գործընթացները Հայաստանի և Արցախի Հանրապետություններում, ներքին և արտաքին մարտահրավերները, արտահայտի տեսակետներ հայոց երկու Հանրապետությունների և աշխարհում դրանց տեղի ու դերի վերաբերյալ, եզրահանգումներ անի ՀՀ և ԱՀ ներքաղաքական և միջազգային աշխարհաքաղաքական զարգացումների հեռանկարների վերաբերյալ:
9.4.4. Ուսումնասիրի զանազան պատմական աղբյուրները և տեքստերը կձևավորի բանիմաց վերաբերմունք միասնություն արժեհամակարգի վերաբերյալ, որը երկու պետականությունների գոյատևման միակ գրավականն է:
9.4.5. Ուսուումնասիրի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր, կվերլուծի այն տարբեր տեսանկյուններից՝ զարգացնելով վերլուծական մտածողությունը:
9.5.1. Նկարագրի և բացատրի սփյուռքի առաջացման պատճառները, պատմական պայմանները, ընթացքը, սփյուռքահայերի առջև ծառացած խնդիրները, սփյուռքահայ խոշոր կենտրոնները, դրանց առանձնահատկությունները, 1990 ական թթ. զանգվածային արտագաղթի հետևանքով նոր ձևավորված համայնքները, արժևորի Հայոց եկեղեցու դերը սփյուռքահայության կյանքում, հայապահպան գործունեությունը:
9.5.2. Զույգերով կամ խմբային աշխատանքի միջոցով վերլուծի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր՝ ձևավորելով համագործակցելու հմտություն:
9.5.3. Ուսումնասիրի և վերլուծի զանազան պատմական աղբյուրները և տեքստերը, ձևավորի բանիմաց վերաբերմունք ինքնություն արժեհամակարգի վերաբերյալ, որը հայկական սփյուռքի գոյատևման գրավականն է:
9.6.1.Ուսումնասիրի հայոց պետությունների առջև ծառացած քաղաքական, տնտեսական, մշակութային և բնապահպանական հիմնախնդիրները:
9.6.2.Ուսումնասիրի հայ ժողովրդի առջև ծառացած զանազան հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները՝ ձևավորի հաստատակամություն ազգը պահպանելու և զարգացնելու գործում:

9.6.3. Ուսումնասիր զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր, վերլուծի խնդիրների լուծման տարբերակները՝ ձևավորի խնդիրներ լուծելու հմտություն:

**3.2. Հանրակրթական միջնակարգ ծրագրի հայագիտություն բնագավառի վերջնարդյունքները**

10.1.1. Վերլուծի և քննարկի առաջին պետությունների ձևավորման, զարգացման և ակման առանցքային պատմական իրադարձությունները, դրանց պատճառահետևանքային կապերը, այդ պետություններրի ունեցած դերակատարումը համաշխարհային պատմական գործընթացներում:
10.1.2. Հետազոտի պատմական այն գործընթցները, որոնք ստեղծեցին հնարավորություն, կարողություն հայկական պետականության ձևավորման և զարգացման համար:
10.1.3. Սանը հետազոտելով զանազան պատմական աղբյուրներ կզարգացնի ակադեմիական հետազոտական հմտությունը:
10.2.1. Վերլուծի և քննարկի Ք.ծ.ա. IX-III դարերի պետությունների ձևավորման, զարգացման և ակման առանցքային պատմական իրադարձությունները, դրանց պատճառահետևանքային կապերը, այդ պետություններրի ունեցած դերակատարումը համաշխարհային պատմական գործընթացներում:
10.2.2. Հետազոտի պատմական այն գործընթցները, որոնք ստեղծեցին հնարավորություն, կարողություն հայկական պետականության ձևավորման և զարգացման համար:
10.2.3. Սանը հետազոտելով զանազան պատմական աղբյուրներ կզարգացնի ակադեմիական հետազոտական հմտությունը:
10.3.1. Հետազոտի Արտաշեսյան թագավորության ձևավորման, զարգացման և անկման պատմական գործընթացները, վերլուծի դրանց պատճառահետևանքային կապերը, քննի այդ թագավորության ունեցած դերակատարումը համաշխարհային պատմական գործընթացներում:
10.3.2. Հետազոտի Արտաշեսյան թագավորության առաջնորդության դրակատարումը և տարածաշրջանում և հայկական պետականության ամրապնդման գործընթացում՝ ձևավորելով բանիմաց վերաբերմունք առաջնորդություն արժեհամակարգի վերաբերյալ:
10.3.3. Հետազոտի Արտաշեսյան թագավորության վերաբերյալ զանազան պատմական աղբյուրները, ձևավորի վերլուծական քննական մտածողություն:
10.4.1. Հետազոտի և վերլուծի-քննի ավատատիրական հասարակարգի հաստատումը Հայկական լեռնաշխարհում, Արշակունյաց թագավորության ձևավորման, զարգացման և անկման գործընթացները, միջազգային աշխարհաքաղաքակն գործընթացների ազդեցությունը այս պատմական իրադարձությունների վրա:
10.4.2. Հետազոտի ավատատիրական հարաբերությունների ձևավորումը և Արշակունյաց թագավորության գործընթացները արդիականություն արժեհամակարգի համատեքստում՝ ձևավորելով բանիմաց վերաբերմունք այդ արժեհամակարգի վերաբերյալ:
10.4.3. Հետազոտի ավատատիրության և Արշակունյաց թագավարության պատմությունը՝ վերհանելով և քննելով այն խնդիրենը և լուծումները, որոնք կիրառվել են այս պատմական ժամանակաշրջանում՝ ձևավորելով բանիմաց և գիտակից մոտեցում այս հմտությանը:
10.5.1. Հետազոտի և վերլուծի-քննարկի ավատատիրական մասնատվածության դրսևորումները հայ իրականության մեջ, աշխարհաքաղաքական նոր փոփոխությունները և Բագրատունյաց թագավորության և այլ հայկական պետությունների հաստատման ու զարգացման գործընթացները:
10.5.2. Հետազոտելով պատմական այս ժամանակաշրջանի մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղիները, որոնք ավարտվեցին անկախ պետականության վերականգմամբ՝ ձևավորի բանիմաց վերաբերմունք հաստատակամությունն արժեհամակարգի վերաբերյալ:

10.5.3. Վերլուծի պատմական զանազան աղբյուրներ՝ զարգացնելով վերլուծական քննական մտածողություն:
10.6.1.Ուսումնասիրի Կիլկիայի հայկական պետականության ձևավորման, զարգացման և անկման պատմական գործընթացները:
10.6.2. Վերլուծի Կիլիկիայի հայկական թագավարության վերաբերյալ զանազան պատմական աղբյուրները և տեքստերը, ձևավորի բանիմաց վերաբերմունք առաջնորդություն արժեհամակարգի վերաբերյալ, որը բնութագրիչ էր Կիլկիայի հայ իշխաններին ու թագավորներին:
10.6.3. Հետազոտի և վերլուծի զանազան պատմական աղբյուրներ և տեքսետր կձևավորի քննական վերլուծական մտածողություն:
11.1.1.Վերլուծի անկախ պետականության կորստից հետո նախարարական համակարգի դերակատարումը V-VI դարերում հայ ժողովրդի պատմության մեջ, միջնադարյան դավաբանական պայքարը, ինքնատիպ մշակութային ինքնության ձևավորման անհրաժեշտությունը:
11.1.2. Հետազոտի պատմական զանազան աղբյուրներ և տեքստեր, վերլուծի դրանք ձևավորելով քննական վերլուծական մտածողություն:
11.1.3. Հետազոտի զանազան պատմական աղբյուրները և տեքստերը, ձևավորի բանիմաց վերաբերմունք հաստատակամություն արժեհամակարգի նկատմամբ, որը առաջնորդում էր հայ նախարարական ընտանիքներին ազատագրական պայքարում, հայ հոգևորականությանը դավանաբանական պայքարում և հայ ինքնատիպ մշակույթի ձևավորման գործում:
11.1.4. Ուսումնասիրի իր համայնքը, վերհանի մշակութային այն շերտերը, որոնք առկա են իր համայնքում տվյալ ուսումնասիրվող ժամանակաշրջանից:
11.2.1. Հետազոտի VII-IX դարերի ազատագրական պայքարը, այդ պայքարի գործըթացները և պատմական գործիչներին, պայքարի պատմական նշանակությունը հայ ժողովրդի ազգապահպանման և նոր պետականության կերտման գործում:
11.2.2. Վերլուծի պատմական զանազան աղբյուրներ և տեքստեր, քննի մարտահրավերները, որոնք հաղթահարեց հայ ժողովուրդը պատմական այդ ժամանակահատվածում:
11.2 3. Վերլուծի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր, ձևավորի հայ ժողովրդի պատմության տվյալ ժամանակաշրջանի վերաբերյալ խնդրահարույց հարցերի լուծման հմտություն:
11.2.4. Ուսումնասիրի իր համայնքը և ներկայացնի մի շարք խնդիրներ և դրանց լուծման ուղիներ, որոնք առկա են համայնքում:
11.3.1. Հետազոտի ազատագրական պայքարի նոր գաղափարախոսության ձևավորումը, առևտրականության և լուսավորականության դերակատարումը այդ նոր գաղափարախոսության ձևավորման մեջ:
11.3.2. Հետազոտի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր, կձևավորի բանիմաց վերաբերմունք՝ ազատություն արժեհամակարգի վերաբերյալ, որը առաջնորդում էր հայ հասարակական շրջանակներին ազատագրական պայքարի նոր փուլում:
11.3.3. Հետազոտի պատմական տեքստեր, աղբյուրներ զույգերով կամ խմբերով՝ ձևավորի համագործակցային հմտություն:
11.3.4. Ուսումնասիրի իր ու իր շրջապատում եղած արժեհամակարգը, ներկայացնի որևէ աշխատանքի տեսքով ազատություն գաղափարի դրսևորումը իր ընկալմամբ:
11.4.1. Հետազոտի ազատագրական պայքարի զինված փուլի ձևավորումը, նպատակները և գործընթացները, հայդուկային շարժումը և Մայիսյան հերոսամարտերի դերը հայ ժողովրդի կյանքում:
11.4.2. Հետազոտի և վերլուծի տվյալ թեման, ձևավորի բանիմաց վերաբերմունք ազատություն արժեհամակարգի վերաբերյալ:

11.4.3. Զույգերով կամ խմբերով վերլուծի և քննի զանազան պատմական աղբյուրներ և տեքսեր՝ ձևավորելով համագործակցելու հմտություն:
11.4.4. Վերլուծի գրական այն ստեղծագործությունները, որտեղ ներկայացված է Արևմտյան և Արևելյան Հայաստանների զինված ազատագրական պայքարի գործիչների գործունեությունը և կներկայացնի այդ գործիչների անձնային նկարագիրը:
11.5.1. Հետազոտի Հայաստանի Երրորդ Հանրապետության կայացման գործընթացները, Արցախյան հիմնախնդրի ձևավորումը և ԱՀ կայացման գործընթացները, Արցախյան հերոսամարտի նշանակությունը հայ ժողովրդի կյանքում:
11.5.2. Հետազոտի տվյալ թեման, ձևավորի բանիմաց վերաբերմունք միասնություն արժեհամակարգ վերաբերյալ, որը հանգեցրեց անկախ պետականության կայացմանը հայկական երկու պետություններում:
11.5.3. Հետազոտի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր, վերլուծի անկախ պետականության կայացման խնդիրները և դրանց լուծման տեղական ու համաշխարհային փորձերը՝ ձևավորի խնդիրներ լուծելու հմտություն:
11.5.4. Հարցում կատարի իր ընտանիքնի այն անդամների հետ, ովքեր ականատես են եղել անկախ պետականության կայացման ժամանակաշրջանին և կգրի վերլուծական էսսե՝ հավաքագրված առաջնային աղբյուրների և իր ձեռք բերած գիտելիքների հիման վրա:
12.1.1. Քննի հայկական պահանջատիրության անցած ճանապարհը 20-րդ դարում. հնարավոր զարգացումները:
12.1.2. Վերլուծի նոր ազգային, առաջադեմ երիտասարդութան և մտավորականության ի հայտ գալու նախադրյալները ՀԽՍՀ-ում, վերլուծի համաշխարհային ընդհանրական տենդենցների համատեքստում:
12.1.3. Գնահատի 1960-ական թթ. ազգային շարժումը ՀԽՍՀ-ում:
12.2.1. Քննի նորագույն շրջանի հայկական հասարակության ընկերային կառուցվածքը, գաղափարական նորարարությունները, համադրի այն ժամանակակի այլ պետությունների կառուցվածքի հետ:
12.2.2. Վերլուծի Խորհրդային Հայաստանի արդյունաբերականացման նախադրյալները:
12.2.3. Հիմնավորի հայկական արդյունաբերական հասարակության առանձնահատկությունները. համադրի այն արևմտյան և մերձավորարևելյան իրականությունների հետ:
12.2.4. Աղբյուրագիտական հենքի վրա ներկայացնի խորհրդահայ հասարակության առօրեական կյանքը:
12.3.1. Վերլուծի կրթական և գիտական նորարարության ընթացքը Հայաստանում XX դարում:
12.3.2. Քննի նորագույն շրջանի հայկական հասարակության ընկերային կառուցվածքը, գաղափարական նորարարությունները, համադրի այն ժամանակակից այլ պետությունների կառուցվածքի հետ:
12.3.3. Վերլուծի Խորհրդային Հայաստանի արդյունաբերականացման նախադրյալները:
12.3.4.Հիմնավորի հայկական արդյունաբերական հասարակության առանձնահատկությունները. համադրի այն եվրոպական և մերձավորարևելյան իրականության հետ:
12.4.1. Վերլուծի կրթական և գիտական նորարարության ընթացքը Հայաստանում 20-րդ դարում:
12.4.2. Վերլուծի Խորհրդային Հայաստանի մշակութային զարգացման նախադրյալները:
12.4.3.Հիմնավորի հայկական մշակութային հաջողությունները համաշխարհային իրականության համատեքստում:

## 4. ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Դասընթացի ծրագիրը կազմված է գիտամանկավարժական հիմնարար սկզբունքների պահանջներին համապատասխան՝ այն է՝ նյութի մատչելիություն, տարիքային համապատասխանություն, գիտամեթոդական բազմազանություն:

«Հայագիտություն» բնագավառի բովանդակությունը համապատասխանում է.

- Գիտության, տեխնոլոգիայի և մշակույթի ժամանակակից նվաճումներն օգտագործելով՝ վեր հանել հայ ժողովրդի պատմական անցյալը և դրա դերակատարումը համաշխարհային պատմության մեջ:
- Զարգացնել սովորողի մոտ ազգային-պետական արժեհամակարգ, ձևավորել պետականակիր արժեհամակարգ ունեցող քաղաքացի:
- Ձևավորել մշտապես ուսումնառող քաղաքացի, անհատ, ով կկարողանա հաստատվել արդի հարափոխ աշխարհում:
- Հասնել նրան, որ սովորողը վեր հանի այն խնդիրները, որոնց հետ առնչվում է առօրյայում և, հիմնվելով ձեռք բերված ուսումնական փորձառության վրա՝ գտնի լուծման նորարար եղանակներ:
- Դասընթացը կազմակերպել մի շարք այլ գիտակարգերի՝ մասնավորապես հասարակագիտական առարկաների հետ սերտ համագործակցության շրջանակներում:

Հանրակրթական միջին դպրոցի «Հայոց պատմություն» առարկայի ծրագրի կազմման հիմքում դրվել է պատմություն ուսումնասիրման գծային մոդելը՝ պահպանելով ժամանակագրական հաջորդականության սկզբունքը:

Ավագ դպրոցում «Հայոց պատմության» ծրագրի կազմման հիմքում շեշտը դրվել է արդի աշխարհում առկա խնդրահարույց թեմաների ուսումնասիրությանը, դրանց պատճառահետևանքային կապերի վեր հանման և քննադատական վերլուծության մեթոդի վրա:

Պատմության հետազոտման վերոնշյալ սկզբունքները կնպաստեն սովորողի կողմից պատմության համակողմանի ուսումնասիրմանը, պատմական գործընթացների և դերակատարների ամբողջական ընկալմանը (ոչ միայն քաղաքական ու տնտեսական վերնախավի ուսումնասիրմանը), որն էլ կնպաստի լայն մտահորիզոն և քննադատական մտածողություն ունեցող անձի ձևավորմանը:

Առարկայի բովանդակությունը ձևավորվում է հետևյալ հիմնական գաղափարների հենքի վրա.

Ամբողջական ընկալում ձևավորելու նպատակով Հայագիտություն բնագավառը կառուցվել է չորս հիմնական գաղափարների շուրջ: Դրանք թույլ են տալիս ստեղծել աշխարհի ամբողջական պատկերը և խուսափել նյութի հատվածային, տարանջատված ընկալումից:

1. *Անհատ և պետություն (ԱՊ),*
2. *Ինքնություն (Ի),*
3. *Մշակույթ (ՄՇ),*
4. *Համակեցություն (ՀԿ):*

Առաջին մակարդակի հիմնական գաղափարները տրոհվել են երկրորդ և երրորդ ենթամակարդակների: «Հայագիտություն» բնագավառի առարկայական չափորոշչային վերջնարդյունքները ձևակերպվել են ըստ յուրաքանչյուր կրթական աստիճանի համար ընտրված երրորդ մակարդակի գաղափարների և դասավանդման և ուսումնառության մոտեցումների շուրջ:

Հիմնական գաղափարների ուսուցումն իրականացվում է պարուրաձև՝ հիմնվելով միջին դպրոցի V-VI դասարանների՝ «Իմ հայրենիքը», «Իմ հայրենիքն ու աշխարհը» դասընթացներում ձևավորված նախնական պատկերացումների վրա: VII-IX դասարաններում և ավագ դպրոցում «Հայոց պատմություն» առարկայի շրջանակում տեղի է ունենում ուսուցանվող տեսական նյութի, սովորողների կարողությունների և հմտությունների աստիճանական խորացում և ընդլայնում:

«Հայագիտություն» բնագավառը ուսուսմնասիրվում է հետևյալ 16 ենթահասկացությունների միջոցով.

«Կառավարում», «Զարգացում», «Փոփոխություն», «Համակարգ», «Անհատ», «Հայրենիք», «Պատճառ-հետևանք», «Հեռանկար», «Քաղաքակրթություն», «Հավատ», «Նորարարություն», «Ձև», «Ժամանակ, տեղ, տարածություն», «Հարաբերություններ», «Փոխկապակցվածություն», «Համագործակցություն»:

| 1-ին մակարդակ | 2-րդ մակարդակ | 3-րդ մակարդակ | Դասարաններ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐ | ԵՆԹԱՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ | ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉ | 5-6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| **Անհատ և պետություն (ԱՊ)** | **Կառավարում (Կ)** | Վաղ պետական կազմավորումները: | | | | | | | |
| | | Վանի թագավորությունը: | | | | | | | |
| | | Հայկազունի Երվանդականների թագավորությունը: | | | | | | | |
| | | Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորությունը: | | | | | | | |
| | **Զարգացում (Զ)** | Մեծ Հայքի Արշակունիների թագավորությունը | | | | | | | |
| | | Հայաստանի Բագրատունյաց թագավորությունը | | | | | | | |
| | | Հայոց պետությունը Կիլիկիայում | | | | | | | |
| | **Փոփոխություն (Փ)** | Հայաստանի պետական-քաղաքական կացությունը 5-9-րդ դդ. | | | | | | | |
| | | Հայաստանի պետական-քաղաքական կացությունը 9-14-րդ դդ. | | | | | | | |
| | | Հայաստանի պետական-քաղաքական կացությունը 14-19-րդ-դդ | | | | | | | |
| | **Համակարգ (ՀՄ)** | Հայաստանի Առաջին Հանրապետությունը | | | | | | | |
| | | Խորհրդային Հայաստանը 1920 - 1991 թթ | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հայաստանի Երրորդ Հանրապետությունը | | | | | | | |
| | | Արցախի Հանրապետությունը | | | | | | | |
| | **Անհատ (Ա)** | Արքաներ<br>գործիչներ<br>հերոսներ | | | | | | | |
| **Ինքնություն (Ի)** | **Հայրենիք (Հ)** | Հայկական լեռնաշխարհ, Հայրենիք, Հայ ժողովրդի ծագումն ու կազմավորումը | | | | | | | |
| | **Ձև (Ձ)** | Ազատագրական շարժման նախադրյալները, սկիզբը, դրսևորումները (XV-XVII դդ) | | | | | | | |
| | | Ազատագրական պայքարը XVIII դարում | | | | | | | |
| | | Ազատագրական պայքարը XIX դարում | | | | | | | |
| | | Հասարակական շարժումներ և քաղաքական պայքար | | | | | | | |
| | | Ազատագրական պայքարը XX դարի սկզբին | | | | | | | |
| | | Ազատագրական պայքարն Արցախում XX դ | | | | | | | |
| | **Հարաբերություններ (ՀԲ)** | Հայկական հարց | | | | | | | |
| | | Հայոց ցեղասպանություն | | | | | | | |
| | **Պատճառ-հետևանք (ՊՀ)** | Գաղթավայրեր և Սփյուռք | | | | | | | |
| **Մշակույթ (ՄՇ)** | **Հեռանկար (ՀՌ)** | Դպրոց, կրթություն<br>Գիտություն<br>Տպագրություն<br>Արվեստ<br>Քաղաքաշինություն, ճարտարապետություն: | | | | | | | |
| | **Նորարարություն (Ն)** | Գլուխգործոցներ<br>Մշակութային ձեռքբերումներ | | | | | | | |
| | **Քաղաքակրթություն (Ք)** | Տոներ<br>Հայոց եկեղեցու ծեսեր. խորհուրդներ<br>Ազգային-եկեղեցական ավանդույթներ<br>Հոգևոր սովորույթներ | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ազգային, ժողովրդական սովորույթներ | | | | | | | |
| | **Հավատք (ՀՎ)** | Հեթանոսություն Քրիստոնեություն | | | | | | | |
| **Համակեցություն (ՀԿ)** | **Փոխկապակցվածություն (Փ)** | Դասեր, խավեր մրցակցություն համագործակցություն հակամարտություն անկախ գոյակցություն | | | | | | | |
| | **Համագործակցություն (ՀԳ)** | Գյուղատնտեսություն արհեստներ առևտուր արդյունաբերություն | | | | | | | |
| | **Ժամանակ, տեղ, տարածություն (ԺՏ)** | Ընտանեկան կյանք համայնական կյանք քաղաքային կյանք բարձրաշխարհիկ կյանք զիվորական կյանք առօրեական կյանք, կենցաղ | | | | | | | |

**Ընդհանրական խաչվող հասկացություններ**

Սովորողների մոտ աշխարհի համապարփակ և գիտականորեն հիմնավորված տեսակետ կառուցելու համար «Հայագիտություն» բնագավառում ներառվել են նաև ընդհանրական խաչվող հասկացություններ: Դրանք հասարակագիտության տարբեր ոլորտները կապելու միջոց են, քանի որ կիրառվում եմ հասարակագիտության և բնագիտության բոլոր ճյուղերում: Խաչվող հասկացությունները կազմակերպչական հենք են հանդիսանում հասարակագիտական և բնագիտական տարբեր առարկաներից ստացված գիտելիքները կապակցելու համար:

Ընդհանրական խաչվող հասկացություններն են՝

- անհատներ և հարաբերություններ
- կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ
- անհատական և մշակութային արտահայտում
- գիտատեխնիկական նորարարություն
- գլոբալիզացիա, կայունություն և փոփոխություն
- արդարություն և զարգացում
- օրինաչափություն
- պատճառ և հետևանք
- համակարգեր
- կառուցվածք և գործառույթ

## 5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկում ենք կիրառել այնպիսի տեխնոլոգիաներ և մեթոդներ, որոնք կապահովեն յուրաքանչյուր սովորողի ակտիվ ընդգրկվածությունը ուսուցման գործընթացում:

Դասավանդման մոտեցումներ.

Հայագիտություն բնագավառի ուսումնառության հիմքում դրված են հետևյալ մոտեցումները.

1.Հասկացությունների վրա հիմնված ուսումնառություն (հասկացություններն առարկայի հիմքում ընկած մեծ գաղափարներ են, որոնք ժամանակի, տարածության և մշակության սահմանափակումներ չունեն):
2.Հմտություններ.
- ✓ Սովորողի մոտ ուսումնական հմտությունների զարգացում. քննադատական վերլուծական, հետազոտական, ստեղծագործական մտածողություն
- ✓ Հաղորդակցական-համագործակցային հմտությունների զարգացում.
- ✓ Ինքնակազմակերպման հմտություն:

3.Ինքնուրույն հետազոտության վրա հիմնված ուսումնառություն:
4. Տարբերակված ուսումնառություն:
5. Իրական կյանքին առնչվող և խնդրահարույց հարցերի հետազոտման վրա հիմնված ուսումնառություն:

## 6. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

**Հայտորոշիչ** (ախտորոշիչ) գնահատումը նախնական գնահատումն է, որի նպատակն է պարզել սովորողների նախնական գիտելիքները, կարողությունները կամ հմտությունները՝ նախքան դասավանդումը:

**Ուսուցանող գնահատումը** հաճախ կոչվում է նաև ձևավորող գնահատում կամ գնահատում ուսումնառության համար: Այսպիսի գնահատումն ուղղված է սովորողների ուսումնառության բարելավմանը: Այն հնարավորություն է տալիս ուսումնառության ընթացքում բացահայտելու սովորողի թույլ և ուժեղ կողմերը, սովորողներին ուղղորդելու և դասավանդման հետագա ընթացքը պլանավորելու համար:

**Ուսումնառության գնահատումը** հաճախ կոչվում է ամփոփիչ գնահատում: Դրա նպատակն է ձեռք բերել ապացույցներ և տվյալներ, որոնք ցույց են տալիս ուսումնառության արդյունավետությունը: Սովորաբար ամփոփիչ գնահատումն իրականացվում է ժամկետի (քառորդ, կիսամյակ) կամ թեմատիկ միավորի վերջում: Տարեվերջյան քննությունները նույնպես ամփոփիչ գնահատման օրինակներ են: Դրանք սովորաբար արվում են պաշտոնական գրանցման համար և հաշվետվական նպատակ ունեն:

**Ձևավորող (ուսուցանող) և ամփոփիչ** գնահատումն իրականացվում է նախապես հրապարակված չափանիշների և սանդղակների համաձայն:

Ստուգումն ու գնահատումը նախատեսվում է իրականացնել տարբեր բնույթի և տիպի առաջադրանքներով: Առարկայի ուսումնառության համար կարևորում ենք.
1. Գիտելիքի,
2. հետազոտական մոտեցումների,
3. հաղորդակցական հմտությունների,
4. մտածողության ձևերի գնահատումը:

**Գնահատականի բաղադրիչները**

Հիմնական դպրոցում «Հայագիտություն» բնագավառի գնահատականի 40%-ը պետք է կազմի հիմնական գաղափարների իմացությունը և ըմբռնումը, 30%-ը՝ հմտությունների զարգացման մասնաբաժինը, 20%-ը՝ արժեհամակարգը, իսկ 10%-ը՝ իրական կյանքի հետ առնչվող ռաջադրանքների ու հետազոտությունների պլանավորումն ու իրականացումը:

Ավագ դպրոցում «Հայագիտություն» բնագավառի գնահատականի 30%-ը պետք է կազմի հիմնական գաղափարների իմացությունը և ըմբռնումը, 40%-ը՝ հմտությունների զարգացման մասնաբաժինը, 20%-ը՝ արժեհամակարգը, իսկ 10%-ը՝ իրական կյանքի հետ առնչվող առաջադրանքների ու հետազոտությունների պլանավորումն ու իրականացումը:

**Հիմնական դպրոց**
**Առաջարկվող ժամաքանակներն ըստ դասարանների**

| | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|---|---|
| Իմ հայրենիքը | 68 | | | | |
| Իմ հայրենիքն ու աշխարհը | | 102 | | | |
| Հայոց պատմություն | | | 102 | 102 | 136 |
| Պահուստային ժամաքանակ | 7 | 6 | 18 | 18 | 18 |
| Դաս-էքսկուրսիա | 20 | 16 | 20 | 20 | 20 |
| Ընդհանուր | 810 | | | | |

## «ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳՐԵՐ
## 5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ (առաջարկվող ժամաքանակ 68 ժամ)

1. Ես ապրում եմ լեռնային երկրում: Քարտեզն իմ գործիքն է՝ ժամանակի և տարածության մեջ (7 ժամ)
2. Հայերի (իմ) ծագումնաբանությունը. Հայկական լեռնաշխարհի բնակիչների կյանքը, կենցաղն ու ավանդապատումները (10 ժամ)
3. Հայոց քրիստոնեական արժեհամակարգը (9 ժամ)
4. Իմ հայրենիքի էպոսը՝ «Սասնա ծռեր» և այլ ժողովուրդների էպիկական պատումները (8 ժամ)
5. Անհատն ու հասարակությունը (7 ժամ)

| **Թեմա 1** |
|---|
| **Ես ապրում եմ լեռնային երկրում**<br>**Քարտեզն իմ գործիքն է՝ ժամանակի և տարածության մեջ (7 ժամ)** |
| **Նպատակ** |
| Աշակերտը ըմբռնում է **հայրենիք** հասկացությունը, կիրառում **ստեղծագործական** իմտություն՝ կազմելով տարբեր քարտեզներ և ձևավորում է **հոգատար վերաբերմունք** սեփական ազգի ու հայրենիքի պատմամշակութային ձեռքբերումների նկատմամբ: |
| **Հետազոտության հարցը** |
| Ո՞վ եմ ես ժամանակի և տարածության մեջ, ինչպե՞ս եմ կողմնորոշվում այս |

| |
|---|
| հարթություններում: Ի՞նչ է քարտեզը, քարտեզների ի՞նչ տեսակներ կան, որո՞նք են տարբեր քարտեզների առանձնահատկությունները, ինչպե՞ս կիրառել դրանք:<br>Ինչպե՞ս է ձևավորվել տոհմածառը՝ յուրաքանչյուր ընտանիքի ու ազգի պատմությունը:<br>Ինչպե՞ս են քարտեզները մեզ օգնում ընկալելու ժամանակը, տեղը և տարածքը:<br>Արդյո՞ք կարելի է միշտ վստահել քարտեզներին: |

| **Հիմնական հասկացություն** | **Ենթահասկացություն** |
|---|---|
| Անհատ և պետություն | «Ժամանակ, տեղ, տարածություն»,<br>«Հայրենիք», |

| **Վերջնարդյունք** |
|---|
| 5.1.1 Նկարագրի իր բնակության վայրը, պետությունը, հայոց հայրենիքը, նրա աշխարհագրական դիրքը, սահմանները, պատմաաշխարհագրական միջավայրը:<br>5.1.2 Ներկայացնի հայրենիքի խորհրդանիշները:<br>5.1.3 Ուսումնասիրի և մեկնաբանի զանազան քարտեզներ՝ զարգացնելով հետազոտական հմտություններ:<br>5.1.4 Կիրառի քարտեզներ ժամանակի և տարածության մեջ կողմնորոշվելու համար:<br>5.1.5 Մեկնաբանի տարբեր քարտեզներ, տարբերակի դրանք:<br>5.1.6 Ձևավորի հոգատար վերաբերմունք իր ընտանիքի, ազգի պատմամշակութային ժառանգության նկատմամբ:<br>5.1.6 Ուսումնասիրի և մեկնաբանի զանազան քարտեզներ՝ ձևավորելով հետազոտական հմտություն: |

| **Թեմայի բովանդակություն** |
|---|
| 1. Ես իմ փոքր հայրենիքում. գյուղի կամ քաղաքային թաղամասի հատակագիծ-քարտեզը:<br>2. Իմ համայնքը, մարզը և երկիրը:<br>3. Մեր հարևանները:<br>4. Քարտեզների տեսակները և տարբերությունը. ինչի՞ համար են դրանք պետք:<br>5. Ես ճանապարհորդում եմ Հայկական լեռնաշխարհի տարածքով՝ նահանգներ, մայրաքաղաքներ, բերդեր, ամրոցներ, եկեղեցիներ, լեռներ, լճեր...<br>6. Զինանշաններ և դրոշներ՝ ժամանակակից և պատմական:<br>**7.** Հետադարձ կապ: |

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| • Բնակավայրի քարտեզի ստեղծում<br>• Դեպքի ուսումնասիրում<br>• Սահիկաշարի ստեղծում | **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ**<br>Սովորողներն ուսումնասիրում են տարբեր մարդկանց ճանապարհորդությունները, մարդկության պատմության |

| | |
|---|---|
| | շրջադարձային կետերը, ինչպես նաև անհատների և քաղաքակրթության միջև հարաբերությունները, դրանց փոխկապվածությանը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: |
| **Միջառարկայական կապերը թեմայում** | |
| Մաթեմատիկա-մասշտաբ<br>Բնագիտություն- երկրագնդի ռելիեֆի փոփոխություն, աշխարհագրական օբյեկտների (Արաքս, Տիգրիս, Եփրատ և այլն) նկարագրություն<br>Գրականություն-տեքստերի ընթերցում՝ «Հերոդոտոս, Մովսես Խորենացի, Անանիա Շիրակացի, Քսենոփոն, Մարկո Պոլո և այլք»: | |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ** | |
| Հ14, Հ18, Հ26, Հ27, Հ28 | |

| | |
|---|---|
| **Թեմա 2.** | |
| **Հայերի (իմ) ծագումնաբանությունը.**<br>**Հայկական լեռնաշխարհի բնակիչների կյանքը, կենցաղն ու ավանդապատումները (10 ժամ)** | |
| **Նպատակ** | |
| Աշակերտը հայ ժողովրդի ծագումնաբանությունը, մշակույթը, կենցաղը, ավանդապատումները, ծեսերն ու տոները վերլուծելով՝ ձևավորում է հոգատար վերաբերմունք ու վարքագիծ ազգային հոգևոր և նյութական մշակույթների նկատմամբ: | |
| **Հետազոտության հարցը** | |
| Ի՞նչ է մշակույթը:<br>Որո՞նք են իմ հոգևոր-մշակութային արժեհամակարգերը:<br>Արդյո՞ք մշակութային ավանդների պահպանումը կարևոր է հասարակության ինքնության զարգացման համար: | |
| **Հիմնական հասկացություն** | **Ենթահասկացություն** |
| Ինքնություն | «Զարգացում»<br>«Մշակույթ» |
| **Վերջնարդյունք** | |
| 5.2.1 Ներկայացնի և մեկնաբանի Հայկական լեռնաշխարհի բնակիչների ավանդական | |

զբաղմունքը, առօրյա կյանքն ու կենցաղը, նյութական և հոգևոր մշակույթի բաղադրիչները (մշակույթը և կենցաղը, ազգային տարազը, խոհանոցը, կիրառական արվեստը), ավանդույթները, տոներն ու ծեսերը:

5.2.2 Վերլուծելով հայ ժողովրդի ծագումնաբանությունը, մշակույթը, տոներն ու ավանդապատումները՝ ներկայացնի դրանց ազդեցությունը իր ինքնության ձևավորման վրա:

5.2.3 Զարգացնի հոգատար և հարգալից վերաբերմունք սեփական ժողովրդի հոգևոր և նյութական մշակույթի նկատմամբ:

5.2.4 Վերլուծի տեղանքի ու իրադարձությունների, պատմաաշխարհագրական տեղանունների հետ կապված ավանդապատումները:

5.2.5 Գնահատի ազգային հոգևոր-մշակութային արժեքները՝ որպես համամարդկային արժեքներ:

5.2.6 Ծանոթանա Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների ավանդական մշակույթին ու կենցաղին:

5.2.7 Վերլուծի և մեկնաբանի հայոց ծագումնաբանությունը և ավանդազրույցները՝ ձևավորելով ստեղծագործական հմտություն:

**Թեմայի բովանդակություն**

1. Մշակույթ և կենցաղ, ազգային տարազ, խոհանոց, կիրառական արվեստ և այլն:
2. Ավանդապատումներ. տեղանքի հետ կապված՝ սարեր, ջրեր, քաղաքներ ու գյուղեր, աշխարհագրական և պատմական վայրերի ու իրադարձությունների՝ քաղաքներ, ամրոցներ, վանքեր, գործիչներ, ճակատամարտեր և այլն:
3. Ավանդույթներ, ծեսեր, տոներ՝ Սուրբ Խաչ, Սուրբ Գևորգ, Թարգմանչաց, Սուրբ Ծնունդ, Սուրբ Սարգիս, Տյառնընդառաջ, Սրբոց Վարդանանց, Բարեկենդան, Ծաղկազարդ, Զատիկ, Համբարձում, Հոգեգալուստ, Վարդավառ, Խաղողօրհնեք և այլն:
4. Հաստանի ազգային փոքրամասնությունների ավանդական մշակույթն ու կենցաղը, ավանդույթներն ու տոները:
5. Հետադարձ կապ:

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| • Թղթապանակի ստեղծում<br>• Դեպքի ուսումնասիրում<br>• Սահիկաշարի ստեղծում<br>• Հարցազրույց տատիկների, պապիկների հետ<br>• Գրի առնի տեղական ավանդույթներ ու ավանդապատումներ<br>• Շաբաթօրյակի կազմակերպում | **Անհատական և մշակութային արտահայտում**<br>Վերլուծի ավանդապատումները, դրանց ունեցած ազդեցութունը տեղանունների, մեր ազգի ինքության ձևավորման, հայի տեսակի ձևավորման վրա:<br>Սովորողները ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով մենք բացահայտում և արտահայտում ենք գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ, արժևորում ենք գեղագիտական ճաշակն ու ստեղծարարությունը: |

| Միջառարկայական կապերը թեմայում |
|---|
| Գրականություն-ազգային տոների ու ավանդույթների, կենցաղի նկարագրությունը<br>Արվեստ-տոների բեմադրում, ազգային երգ ու պար |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| Հ14, Հ18, Հ26, Հ27, Հ28 |

| **Թեմա 3.** | |
|---|---|
| **Հայոց քրիստոնեական արժեհամակարգը (9 ժամ)** | |
| **Նպատակ** | |
| Աշակերտը կուսումնասիրի քրիստոնեական արժեհամակարգը, ինչպես նաև առասպելներ, ավանդապատումներ, հրաշագործություններ, որոնք ձևավորվել են տարբեր ժամանակներում և վայրերում: | |
| **Հետազոտության հարցը** | |
| Ի՞նչ է քրիստոնեական արժեհամակարգը, ի՞նչ է խորհրդանիշը, ի՞նչ է խորհուրդը:<br>Ինչպե՞ս են դրանք ձևավորվում:<br>Արդյո՞ք կրոնական բազմազանությունն է տարբերակում ազգերին: | |
| **Հիմնական հասկացություն** | **Ենթահասկացություն** |
| Արժեք | «Հավատք»,<br>«Փոփոխություն», |
| **Վերջնարդյունք** | |
| 5.1.1 Գնահատի խաղաղասիրությունը, արդարությունը, փոխադարձ հարգանքը և ընկերասիրությունը:<br>5.1.2 Ճանաչի պատմական և մշակութային գործիչներին ու նրանց գործունեությունը:<br>5.1.3 Կիրառի վարքային կանոնները, ձևավորի հոգատար և պատասխանատու վերաբերմունք իր ու շրջապատի նկատմամբ:<br>5.1.4 Գնահատի մարդկանց սիրո, համերաշխության, խոնարհության, օգնելու, փոխադարձ հարգանքի, ազատության և հավասարության վրա հիմնված մարդկային հարաբերությունները:<br>5.1.5 Գնահատի քրիստոնեական արժեհամակարգի դրսևորումները տարբեր հասարակություններում (սկսած միջնադարից):<br>5.1.6 Ուսումնասիրի նախաքրիստոնեական և քրիստոնեական արժեհամակարգերի | |

| |
|---|
| ընդհանրություններն ու առանձնահատկությունները հայ իրականության մեջ։<br>5.1.7 Զարգացնի վերլուծական մտածողությունը համեմատությունների և քննարկումների միջոցով։ |
| **Թեմայի բովանդակություն** |
| 1. Քրիստոնեական արժեհամակարգ<br>2. Քրիստոնեության ընդունումը. առաքյալները։<br>3. Սրբադասված զորավարներ։<br>4. Սբ. Գրիգոր Լուսավորիչ, սբ. Մեսրոպ Մաշտոց։<br>5. Հայաստանում բնակվող այլ ժողովուրդների կրոնա-դավանաբանական համակարգերը։<br>6. Հետադարձ կապ։ |

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| Աղբյուրների ուսումնասիրություն<br>Դերային և համագործակցային վարժություններ<br>Իրավիճակների խաղարկում և քննարկում<br>Բանավեճ | **Անհատական և մշակութային արտահայտում**<br>Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը։<br>Սովորողները ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով մենք բացահայտում և արտահայտում ենք գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ, արժևորում ենք գեղագիտությունը և ստեղծարարությունը։<br>**Արդարություն և զարգացում**<br>Ի՞նչ են հետընթացն ու զարգացումը։<br>Սովորողները ուսումնասիրում են մարդու իրավունքները և պարտականությունները, մարդ-համայնք-հասարակություն հարաբերությունները, ռեսուրսների տեղաբախշումը, հավասար հնարավորությունները, հակամարտության և խաղաղության բանաձևերը։ |

| |
|---|
| **Միջառարկայական կապերը թեմայում** |
| **Գրականություն**-ստեղծագործությունների գրական արժեքի գնահատում<br>**Մաթեմատիկա**-հաշվարկներ, խնդիրների ստեղծում |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի** |

| վերջնարդյունքների հետ |
|---|
| Հ14, Հ18, Հ26, Հ27, Հ28 |

| **Թեմա 4** | |
|---|---|
| **Իմ հայրենիքի էպոսը՝ «Սասնա ծռեր» և այլ ժողովուրդների էպիկական պատումները (8 ժամ)** | |
| **Նպատակ** | |
| Աշակերտը «Սասնա ծռեր» էպոսի և այլ ժողովուրդների էպիկական պատումների օրինակով կուսումնասիրի ազգերի մշակութային առանձնահատկությունները, որոնք յուրաքանչյուրին դարձնում է ինքնատիպ: | |
| **Հետազոտության հարցը** | |
| Ի՞նչ է էպոսը, ի՞նչ է ազատությունը, անկախությունը, հավասարությունը:<br>Արդյոք ազատությունն ու անկախությունը կարևոր են պետություն ունենալու համար: | |
| **Հիմնական հասկացություն** | **Ենթահասկացություն** |
| Արժեք | «Մշակույթ»,<br>«Հարաբերություններ», |
| **Վերջնարդյունք** | |
| 5.4.1. Վերլուծի և քննարկի «Սասունցի Դավիթ» էպոսում ներկայացված արժեհամամակրգերը:<br>5.4.2. Համեմատի և հակադրի այլ ժողովուրդների էպոսներում ներկայացված արժեհամակրգերը «Սասունցի Դավիթ» էպոսի հետ:<br>5.4.5. Համագործակցային աշխատանքի միջոցով տարբերակի էպոսի հերոսների գործունեությունը և արժեհամակարգը:<br>5.4.6. Մեկնաբանի էպոսի հերոսների արժեքները և մեկնաբանության հիման վրա ձևավորի հայրենասիրության և արդարամտության արժեհամակարգը:<br>5.4.7. Սեփական շրջապատի՝ ընկերների, ընտանիքի, համայնքի ներկայացուցիչների վարքի ուսումնասիրության հիման վրա ներկայացնի այն արժեհամակարգերը, որոնք առկա են հայոց էպոսում: | |
| **Թեմայի բովանդակություն** | |
| 1. «Սասունցի Դավիթ» էպոսը:<br>2. Հասարակությունն էպոսում:<br>3. Կերպարներն էպոսում: | |

4. Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում:
5. Այլ ժողովուրդների էպոսները:
6. Հետադարձ կապ:

| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|
| Հերոսների կերպարների ուսումնասիրում<br>Աղբյուրի ուսումնասիրում<br>Զեկույց | **Անհատներ և հարաբերություններ**<br>Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք:<br>Սովորողներն ուսումնասիրում են էպոսի հերոսների կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերությունները, ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրություններն ու տարբերությունները: Էպոսի արժեհամակարգերի և իրենց արժեհամակարգերի համեմատություն են անում՝ տեսնելու թե՞ էպոսի որ հերոսների արժեհամակարգի կրողներն են: |

| **Միջառարկայական կապերը թեմայում** |
|---|
| Գրականություն-առասպել, էպոս<br>Բնագիտություն- կլիմայի կամ լանդշաֆտի փոփոխություն<br>Մաթեմատիկա-օրացույց՝ լուսնային, արևային, շաբաթների բաժանում և այլն<br>Լեզու-հետաքրքիր պատմություններ քաղաքակրթությունների մասին՝ գիր, ուսումնասիրեն հայերենի և արաբերենի տարբերությունները |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| Հ14, Հ16, Հ26, Հ27, Հ28 |

| **Թեմա 5.** |
|---|
| **Անհատն ու հասարակությունը (7 ժամ)** |
| **Նպատակ** |

| | |
|---|---|
| Աշակերտը կուսումնասիրի հայ անհատների ունեցած դերակատարումը հասարակության կյանքում: | |
| **Հետազոտության հարցը** | |
| Ի՞նչ գործոններ են ազդում անհատի ձևավորման վրա:<br>Ո՞րն է անհատի ունեցած ազդեցությունը հասարակության վրա:<br>Արդյոք անհատի ազդեցությունը հասարակության վրա միայն դրական է: | |
| **Հիմնական հասկացություն** | **Ենթահասկացություն** |
| Հասարակություն | Փոփոխություն,<br>Զարգացում |
| **Վերջնարդյունք** | |
| 5.5.1. Ուսումնասիրի անհատի ունեցած ազդեցությունը հայ հասարակության վրա:<br>5.5.2. Վերլուծի անհատի ունեցած դերը հասարակության զարգացման տարբեր բնագավառներում:<br>5.5.3. Քննի անհատի գործունեությունը հասարակության զարգացման տարբեր ոլորտներում՝ ձևավորելով քննական մտածողություն:<br>5.5.4. Գնահատի անհատի ունեցած դերը հասարակության կյանքում՝ ձևավորելով հարգալից վերաբերմունք նորարարություն արժեհամակարգի վերաբերյալ: | |
| **Թեմայի բովանդակություն** | |
| 1. Ո՞վ է անհատը:<br>2. Անհատն ու մշակույթը<br>3. Անհատն ու տնտեսությունը<br>4. Անհատն ու սպորտը<br>5. Անհատն ու ռազմական գործը:<br>6. Անհատն ու գիտությունը:<br>7. Հետադարձ կապ | |

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| Պաստառ<br>Հարցում<br>Թղթապանակ | **Անհատական և մշակութային արտահայտում**<br>Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը:<br>Սովորողները ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով մենք բացահայտում և արտահայտում ենք գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ, արժևորում ենք |

| | |
|---|---|
| | գեղագիտությունը և ստեղծարարությունը: |

| |
|---|
| **Միջառարկայական կապերը թեմայում** |
| **Գրականություն**-ստեղծագործությունների գրական արժեքի գնահատում<br>**Մաթեմատիկա**-հաշվարկներ, խնդիրների ստեղծում |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| Հ14, Հ18, Հ26, Հ27, Հ28 |

**«Իմ հայրենիքն ու աշխարհը»**
**6-րդ դասարան (առաջարկվող ժամաքանակ՝ 102 ժամ)**

1. Անցյալի ուսումնասիրման անհրաժեշտությունը և միջոցները (6 ժամ)
2. Նախապատմությունից մինչև պատմություն (12 ժամ)
3. Ի՞նչ ենք սովորում հնագույն քաղաքակրթություններից և ինչու՞(24 ժամ)
4. Հավատալիքներից մինչև աշխարհի կրոնական ու գիտական ասպեկտներ (20 ժամ)
5. Նորարարություններն ու գաղափարները փոխում են աշխարհը (18 ժամ)

| |
|---|
| **Թեմա 1** |
| **Անցյալի ուսումնասիրման անհրաժեշտությունը և միջոցները (6 ժամ)** |
| **Նպատակ** |
| Աշակերտը կուսումնասիրի պատմություն առարկան, խնդիրները, գործառույթներն ու ուսումնասիրման եղանակները: |
| **Հետազոտության հարցը** |
| Ի՞նչ գործիքներով ենք ուսումնասիրում պատմությունը:<br>Որո՞նք են պատմության ուսումնասիրման հիմնական հասկացությունները:<br>Արդյո՞ք պատմության ուսումնասիրման բոլո՞ր աղբյուրներն են հավաստի: |
| **Վերջնարդյունք** |
| 6.1.1 Մեկնաբանի իր կյանքից կամ ընտանիքի անդամների կյանքից իրավիճակներ, որոնք հանդիսանում են պատմության մի մաս:<br>6.1.2 Բացատրի պատմական տարբեր եզրույթները՝ ներկայացնելով դրանց ճիշտ կիրառումը:<br>6.1.3 Ուսումնասիրի և վերլուծի տարբեր իրավիճակներ իր կամ ընտանիքի կյանքից որպես պատմության մաս՝ ձևավորելով հետաքրքրասիրություն «Պատմություն» առարկայի |

նկատմամբ:
6.1.4 Մեկնաբանի պատմության ուսումնասիրման անհրաժեշտությունը՝ անցկացնելով հարցումներ իր ընտանիքի կամ շրջապատի մարդկանց կյանքի և գործունեության վերաբերյալ:

**Թեմայի բովանդակություն**

1. Պատմության ուսումնասիրման եզրույթները, ուսումնասիրման մեթոդները, աղբյուրները, պարբերացումը:
2. Քաղաքակրթություն, պետությունների առաջացումը:
3. Արդյոք բոլոր պետություններն ու հասարակությունները միանման են զարգանում:
4. Ինչպես ենք ուսումնասիրում պետությունն ու հասարակությունը. սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային:
5. Հետադարձ կապ

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| • Աշխատանք սկզբնաղբյուրներով<br>• դեպքի ուսումնասիրում<br>• 3D մոդելով միջավայրի ստեղծում | **Օրինաչափություն**<br>Պատճառները, հետևանքները, ընդհանրությունները, առանձնահատկությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ: Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների փոխհարաբերություններն անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: |

**Միջառարկայական կապերը թեմայում**

Աշխարհագրություն-քաղաքակրթությունների զարգացման աշխարհագրական միջավայրի ազդեցությունը
Լեզուներ, գրականություն- պատմական տեքստերի ընթերցում
Մաթեմատիկա-հաշվարկներ
Արվեստ-պատմության արտացոլանքը

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ**

Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35,

| Թեմա 2. | |
|---|---|
| **Նախապատմությունից մինչև պատմություն (12 ժամ)** | |
| **Նպատակ** | |
| Աշակերտները նախնադարյան հասարակության զարգացումը, **համեմատելով և համադրելով** ժամանակակից հասարակության հետ, կգիտակցեն այն **ձեռքբերումները**, որոնք ունեցել է մարդկությունը պատմության ընթացքում: | |
| **Հետազոտության հարցը** | |
| • Ի՞նչ է նախնադարյան հասարակությունը, ի՞նչ շրջափուլերի է բաժանվում:<br>• Ի՞նչ զարգացում են ապրել մարդն ու մարդկային հասարակությունները նախապատմությունից մինչև վաղ երկրագործական հասարակությունների առաջացումը:<br>• Որքանո՞վ նեոլիթյան հեղափոխությունը ազդեց մարդու զարգացման վրա:<br>• Արդյո՞ք այսօր կան նախնադարյան հասարակության երևույթներ, օջախներ աշխարհում: | |
| **Հիմնական հասկացություն** | **Ենթահասկացություն** |
| Անհատ | Ժամանակ, տեղ, տարածություն<br>Պատճառ-հետևանք |
| **Վերջնարդյունք** | |
| Գիտելիք<br>6.2.1. Ուսումնասիրի նախնադարյան հասարակությունները, դրանց առաջացման, ձևավորման և զարգացման գործընթացները, համեմատի և համադրի այդ հասարակությունները արդի հասարակությունների հետ՝ վերհանելու պատմական զարգացման գործընթացներն ու ձեռքբերումները:<br>Արժեհամակարգ-ձեռքբերում<br>6.2.2. Մեկնաբանի նախնադարյան հասարակությունները, ձևավորի գիտելիքահեն մտածողություն մարդկության ունեցած ձեռքբերումների վերաբերյալ:<br>Հմտություն-ստեղծարարություն<br>6.2.3.Վերլուծի պատմական աղբյուրներն ու տեքստերը նախնադարյան մարդու գործունեություն վերաբերյալ, զարգացնի ստեղծագործական-վերլուծական հմտությունը:<br>Գործունեություն<br>6.2.4.Կազմի համեմատական վերլուծական շարադրանք նախնադարյան մարդու և ներկայիս մարդու առօրյա գործունեության վերաբերյալ: | |

| Թեմայի բովանդակություն | |
|---|---|
| Հոմո հաբիլիսի քարանձավներում ճանապարհորդում ենք Լյուսիի (հոմո սապիենս) հետ:<br>1. Մարդու ծագումը. հմուտ մարդ, ուղիղ քայլող մարդ, բանական մարդ:<br>2. Մարդը քարե դարում, նեոլիթյան հեղափոխությունը:<br>3. Հասարակության անհամաչափ զարգացման օրինաչափությունները:<br>4. Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակատեղիները: Հասարակական հարաբերություններ, տնտեսություն, մշակույթ, կրոն:<br>5. Հետադարձ կապ: | |
| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
| Այցելություն պեղավայրեր<br>Պաստառ<br>Ժամանակի մեքենա՝ «Ես ապրում եմ նախնադարում» շարադրանք | **Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայունություն**<br>Ի՞նչ է փոխկապակցվածությունը:<br>Սովորողները ուսումնասիրում են մարդու ստեղծած համակարգերի և համայնքների փոխկապակցվածությունը, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, հնարավորությունները, որոշումների ազդեցությունը մարդկության և շրջակա միջավայրի վրա: |
| **Միջառարկայական կապերը թեմայում** | |
| Արվեստ-նախնադարյան մարդու կերպարի արտացոլանքը արվեստում, ժայռապատկեր և այլն<br>Գրականություն-գրական ստեղծագործություններ<br>Մաթեմատիկա-զանազան հաշվարկներ, խնդիրների ստեղծում | |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ** | |
| Հ14, Հ18, Հ26, Հ27, Հ28 | |

| **Թեմա 3** |
|---|
| **Ի՞նչ  ենք սովորում հնագույն քաղաքակրթություններից և ինչու՞ (24 ժամ)** |
| **Նպատակ** |

| | |
|---|---|
| Աշակերտը ուսումնասիրելով և մեկնաբանելով հնագույն քաղաքակրթությունները՝ կձևավորի քննադատական մտածողություն և կգիտակցի առօրյա հասարակությունների վրա դրանց թողած ազդեցությունը: | |
| **Հետազոտության հարցը** | |
| Որո՞նք են հնագույն քաղաքակրթությունների ձեռքբերումները:<br>Ինչպե՞ս կարող ենք մենք ուսումնասիրել պատմությունը, ի՞նչ է քաղաքակրթությունը: Ո՞ր գործոնները նպաստեցին տարբեր քաղաքակրթությունների զարգացմանը:<br>Արդյո՞ք հնագույն քաղաքակրթությունները ունեցել են որևէ ազդեցություն ժամանակակակից քաղաքակրթությունների ձևավորման վրա: | |
| **Հիմնական հասկացություն** | **Ենթահասկացություն** |
| Անհատ և Պետություն | «Կառավարում»<br>«Համակարգ» |
| **Վերջնարդյունք** | |
| Գիտելիք<br>6.3.1.Վերլուծի աշխարհի և Հայկական լեռնաշխարհի հնագույն քաղաքակրթությունները, դրանց ձևավորման ու զարգացման ընթացքը, համեմատի միմյանց հետ, գնահատի դրանց ազդեցությունը մեր օրերի վրա:<br>6.3.2.Վերլուծի և համակարգի հնագույն քաղաքակրթոյթունների ձեռքբերումները. քաղաքական, տնտեսական, մշակութային, հասարակական:<br>Արժեհամակարգ-մարտահրավերներ<br>6.3.3.Ուսումնասիրի հին քաղաքակրթությունները և դրանց կողմից ժամանակակից մարտահրավերները հաղթահարելու գործընթացները, ձևավորի բանիմաց արժեհամակարգ մարտահրավերներ արժեհամակարգի վերաբերյալ դիտարկելով այն որպես հասարակության զարգացման կարևոր բաղադրիչ:<br>Հմտություն- հետազոտական հմտություն<br>6.3.4.Ուսումնասիրելով հնագույն քաղաքակրթություններին վերաբերվող զանազան աղբյուրները՝ ձևավորի հետազոտական հմտություն:<br>Գործողություն<br>6.3.5. Ուսումնասիրելով իր համայնքը՝ հավաքագրի և ամբողջացնի հնագույն քաղաքակրթությունների ձեռքբերումները, որոնք հիմք են հանդիսացել իր համայնքի գործունեության համար: | |
| **Թեմայի բովանդակություն** | |
| 1. Լեզվաընտանիքներ, ժողովուրդներ:<br>2. Գրային համակարգերի առաջացումը:<br>3. Առաջին դպրոցների առաջացումը:<br>4. Հնագույն քաղաքակրթությունների հասարակական կյանքը, մարդկանց զբաղմունքը, | |

առօրյա կյանքն ու կենցաղը:
5. Հայկական լեռնաշխարհի հնագույն հասարակությունների պատմա-մշակութային միջավայրը, բնակատեղիները, առևտուրը, հասարակական կյանքը:
6. Հետադարձ կապ:

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| • Ստեղծել թղթապանակ կամ ամսագիր՝ «Հնագույն քաղաքակրթությունները իմ աչքերով»<br>• Արտանկարել հիերոգլիֆներ և սեպագրեր<br>• Արտանկարել և քանդակել հին եգիպտական և բաբելական արվեստի նմուշներ, դիցարանի կերպարներ<br><br>• Կատարել աստղային երկնքի դիտումներ, գտնել ձմեռային երկնքում Օրիոնի համաստեղությունը և Մեծ շան ալֆա աստղը՝ Սիրիուսը<br><br>• Նկարել դիցարանի կերպարները<br><br>• Կազմել պատկերազարդ գիրք, որտեղ կներառվեն այդ քաղաքակրթությունների բոլոր ձեռքբերումները<br><br>• Ծանոթանալ չինական թեյի, մետաքսի և ճենապակու մշակույթին, նկարչությանը, պոեզիայի նմուշներին, բժշկության և մարտարվեստների օրենքներին | **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ**<br>Որտե՞ղ և ե՞րբ<br>Սովորողները ուսումնասիրում են տարբեր մարդկանց կենցաղը, նրանց պատմությունները, ճանապարհորդությունները, մարդկության պատմության շրջադարձային կետերը, հայտնագործությունները, գյուտերը, ինչպես նաև անհատների և քաղաքակրթությունների միջև հարաբերությունները, դրանց փոխկապակցվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:<br><br>**Անհատական և մշակութային արտահայտում**<br>Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը:<br>Սովորողները ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով մենք բացահայտում և արտահայտում ենք գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակութային դրսևորումներ, արժևորում ենք գեղագիտությունը և ստեղծարարությունը: |

**Միջառարկայական կապերը թեմայում**

Գրականություն-գրական ստեղծագործություններ,
Մաթեմատիկա-հաշվարկներ, խնդիրների ստեղծում
Արվեստ-հին աշխարհի քաղաքակրթությունների ընդհանությունները արվեստում
Օտար լեզու-տեքստերի ընթերցում

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ**

Հ14, Հ16, Հ26, Հ27, Հ28

**Թեմա 4.**

**Հավատալիքներից մինչև աշխարհի կրոնական ու գիտական ընկալում (20 ժամ)**

**Նպատակ**

Աշակերտները տարբեր հավատալիքների, աշխարհաստեղծման վերաբերյալ տարբեր կրոնական և գիտական տեսությունների ուսումնասիրության հիման վրա կզարգացնեն իրենց երևակայությունը և մեկնաբանելու հմտությունները:

**Հետազոտության հարցը**

Որո՞նք են աշխարհի կրոնական հավատալիքները: Ի՞նչ է կրոնը և հավատալիքը:
Որո՞նք են ազգային փոքրամասնությունների հավատալիքները:
Ինչպե՞ս է ժամանակի ընթացքում փոխվել հավատալիքների համակարգը:
Ինչպե՞ս է հավատը և կրոնը ազդում մարդու գործունեության վրա :
Ո՞րն է աստվածակենտրոն և մարդակենտրոն քաղաքակրթությունների տարբերությունը:
Ինչպե՞ս են փոխվել մարդու պատկերացումները աշխարհաստեղծման գործընթացների վերաբերյալ՝ կրոնից մինչև գիտական տեսություն:

| **Հիմնական հասկացություն** | **Ենթահասկացություն** |
|---|---|
| *Արժեք* | «Փոփոխություն»,<br>«Մշակույթ», |

**Վերջնարդյունք**

Գիտելիք

6.4.1. Ուսումնասիրի Հին աշխարհի հավատալիքների համակարգը և դրանց դերակատարումը հին հասարակությունների կյանքում:

Արժեհամակարգ-ստեղծագործականություն

6.4.2. Ուսումնասիրի տարբեր երկրների և մշակույթների հավատալիքների համակարգը, ձևավորի բանիմաց արժեհամակարգ ստեղծարարություն վերաբերյալ:

Հմտություն-վերլուծություն

6.4.3.Ուսումնասիրի տարբեր երկրների հավատալիքների համակարգը, ձևավորի վերլուծական հմտություն՝ համեմատելով և համադրելով դրանք:

Գործողություն

6.4.4. Հարցում կանցկացնի իր համայնքում և կհավաքագրի ու կներկայացնի այն

| |
|---|
| մշակութային հավատալիքները, որոնք առկա են իր համայնքում: |
| **Թեմայի բովանդակություն** |
| 1. Հավատալիքները նախնադարում. մարդու և բնության սերտ կապը<br>2. Հին աշխարհի հավատալիքներ (դիցարան՝ հինարևելյան, անտիկ, հայկական)<br>3. Հայկ և Բել, Արա Գեղեցիկ և Շամիրամ, Վահագնի ծնունդը և մյուս առասպելները<br>4. Համաշխարհային կրոնները և հավատալիքները:<br>5. Հունական դիցաբանություն<br>6. Աշխարհի արարման գիտական տեսություն<br>7. Հետադարձ կապ |

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| Տեսանյութի ստեղծում. «Ինչպե՞ս է հավատը ազդում հասարակության և մարդու կենսակերպի վրա» | **Անհատական և մշակութային արտահայտում**<br>Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը:<br>Սովորողները ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով մենք բացահայտում և արտահայտում ենք գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ: Արժևորում ենք գեղագիտությունը և ստեղծարարությունը: |

| |
|---|
| **Միջառարկայական կապերը թեմայում** |
| Լեզուներ և գրականություն-տեքստերի ընթերցում և մեկնաբանում<br>Արվեստ-կրոնի արտացոլանքը արվեստում<br>Մաթեմատիկա-հաշվարկներ, խնդիրների լուծում |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| Հ14, Հ18, Հ26, Հ27, Հ28 |

| |
|---|
| **Թեմա 5.** |
| **Նորարարություններն ու գաղափարները փոխում են աշխարհը (18 ժամ)** |
| **Նպատակ** |

| |
|---|
| Աշակերտները ուսումնասիրում են նորարարություններ և գաղափարներ, որոնք տարբեր ժամանակներում վերափոխել են հասարակությունների և անհատների գործունեությունը: |
| **Հետազոտության հարցը** |
| Ի՞նչ է նորամուծությունը և գաղափարը:<br>Ինչպիսի՞ մարտահրավերներ կարող են բերել նորամուծությունները հասարակությանը և անհատին:<br>Արդյո՞ք նորամուծությունները ազդում են բոլորի վրա: |

| **Հիմնական հասկացություն** | **Ենթահասկացություն** |
|---|---|
| *Արժեք* | «Գլոբալ մարտահրավեր»,<br>«Հեռանկար», |

| |
|---|
| **Վերջնարդյունք** |
| Գիտելիք<br>6.5.1.Հետազոտի և վերլուծի տարբեր ժամականերում և հասարակություններում կիրառվող նորարարությունները և նորարար գաղափարները, արժևորի դրանց դերը հասարակության և անհատի կյանքում:<br>Արժեհամակարգ-արդիականություն<br>6.5.2.Ուսումնասիրի տարբեր ժամականերում և հասարակություններում կիրառվող նորարարությունները և նորարար գաղափարները, ձևավորի գիտակից վերաբերմունք նորարարության և արդիականության վերաբերյալ:<br>Հմտություն-ստեղծարարություն<br>6.5.3.Քննության ենթարկի տարբեր գաղափարները և նորարարությունները, ստեղծի իր տարբերակը:<br>Գործողություն-հետազոտություն<br>6.5.4.Ուսումնասիրի իր համայնքը և վեր հանի այն գաղափարները, որոնք առկա են և փոխել են իր համայնքը: |
| **Թեմայի բովանդակություն** |
| Նորարարությունների հետևանքով ստեղծվում են նոր հնարավորություններ և նոր վտանգներ:<br>1. Աշխարհի 7 հրաշալիքները նորարարություններ:<br>2. Գիրը՝ որպես նորարարություն. գաղափարագիր-սեպագիր - այբբենական գիր - գրատպություն-համակարգիչ - համացանց:<br>3. Եգիպտական աստվածակենտրոն քաղաքակրթությունից մինչև Հունաստանի մարդակենտրոն քաղաքակրթություն:<br>4. Անտիկ աշխարհ: Աթենք և Սպարտա. պոլիսի և քաղաքացու գաղափարը, օրենքներ:<br>5. Հույն փիլիսոփաների հայացքները. Պյութագորասն ու պյութագորական համայնքը իդեալական հասարակություն ստեղծելու փորձ: Սոկրատես-Պլատոն-Արիստոտել:<br>6. Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները՝ մշակութային նորարարության հիմք. հելլենիզմի առաջացումը: |

| |
|---|
| 7. Նորն ու նորարականը Արևելյան հասարակություններում:<br>8. Հետադարձ կապ: |

| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|
| • Պաստառ. «Նորարարությունները փոխում են աշխարհը»<br>• Բանավեճ՝ «Ժամանակակից աշխարհի տեխնոլոգիական նորամուծությունները, առավելություններ և վտանգներ»<br>• Պլատոնի՝ Ատլանտիդայի մասին լեգենդի ուսումնասիրություն և ժամանակակից աշխարհի էկոլոգիական աղետների պատճառների քննարկում<br>• Հունական արվեստի հետ ծանոթացում, որոշ նմուշների՝ զարդերի, սափորների վրա նկարների, քանդակների արտապատկերում<br>• Հին հունական ողբերգություններից որևէ մեկի կրճատ տարբերակի բեմադրում<br>• Վարդան Այգեկցու առակների բեմադրություն<br>• Սոփեստական բանավեճ որևէ խնդրի շուրջ՝ կողմերի դերերի փոփոխությամբ | **Գիտատեխնիկական նորարարություն**<br><br>Ինչպե՞ս ենք գնահատում այն աշխարհը, որտեղ ապրում ենք:<br>Սովորողները ուսումնասիրում են բնությունը, դրանց օրենքները, փոխազդեցությունը մարդկանց և բնության միջև, գիտական և տեխնոլոգիական նվաճումների ազդեցությունը համայնքի և շրջակա միջավայրերի վրա, շրջակա միջավայրի ազդեցությունը մարդկային գործունեության վրա, շրջակա միջավայրի հարմարեցումը մարդու կարիքներին: |

| **Միջառարկայական կապերը թեմայում** |
|---|
| Արվեստ- արվեստի տեսակները, նորամուծությունների ազդեցությունը ու պատկերումը արվեստում<br>Լեզուներ և գրականություն-տեքստերի ընթերցում, վերլուծություն<br>Մաթեմատիկա-հաշվարկներ, խնդիրների լուծում |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| Հ10, Հ14, Հ19, Հ23, Հ24, Հ26, Հ27, Հ28 |

**«Հայոց պատմություն»**

**7-րդ դասարան (առաջարկվող ժամաքանակ 102 ԺԱՄ)**

1. Հայկական լեռնաշխարհի վաղ պետականությունները Ք.ծ.ա. III-I հազարամյակներում (10 ժամ)

2. Հայկազունի Երվանդյանների թագավորությունը: Հայքը Ք.ծ.ա. VII-III դդ. (10 ժամ)
3. Հայկական թագավորությունները Ք.ծ.ա. II-I դդ. (14 ժամ)
4. Մեծ Հայքի Արշակունիների թագավորությունը (14 ժամ)
5. Հայկական պետականության նախարարական շրջանը (10 ժամ)
6. Հայոց մշակույթը V-IX դդ. (14 ժամ)
7. Բագրատունյաց թագավորությունը (14 ժամ)
8. Հայաստանը XI-XIV դարերում (8 ժամ)

| **Թեմա 1** |
|---|
| **Հայկական լեռնաշխարհի վաղ պետականությունները Ք.ծ.ա. III-I հազարամյակներում (10 ժամ)** |
| **Նպատակ** |
| Աշակերտը կուսումնասիրի Ք.ծ.ա. III-I հազ. հայկական քաղաքակրթության պատմությունը, կվերլուծի մարտահրավերներն ու ձեռնարկված միջոցառումները: |

| **Հետազոտության հարցը** | |
|---|---|
| • Հայկական լեռնաշխարհի հնագույն հասարակությունները ի՞նչ տեղ ու դեր ունեին Հին Արևելքի քաղաքակրթությունների համակարգում:<br>• Ի՞նչ լուծումներ էին առաջարկում տվյալ շրջանի տիրակալները ժամանակի մարտահրավերներին պատասխանելու համար: | |
| **Հիմնական հասկացություն** | **Ենթահասկացություն** |
| Անհատ և պետություն | «Քաղաքակրթություն»<br>«Նորարարություն» |

| **Վերջնարդյունք** |
|---|
| Գիտելիք<br>6.4.1. Վերլուծի և քննի Ք.ա. III-I հազ. հայկական քաղաքակրթության ձևավորման, զարգացման և անկման պատմական գործընթացները:<br>Արժեհամակարգ-առաջնորդություն<br>6.4.2. Ուսումնասիրի Ք.ա. III-I հազ. հայկական քաղաքակրթության գործունեությունը՝ ձևավորելով գիտելիքահեն մտածողություն առաջնորդության վերաբերյալ<br>Հմտություն-մեդիագրագիտություն<br>6.4.3. Հետազոտի և ձևավորի պատմական աղբյուրներ ընթերցելու և վերլուծելու հմտություն:<br>Գործողություն-համեմատական վերլուծություն:<br>6.4.4. Ուսումնասիրի իր համայնքը և ներկայացնի, թե Ք.ա. III-I հազ. հայկական |

| |
|---|
| քաղաքակրթության շրջանից մնացած հուշարձանները ինչ ազդեցություն ունեն իր կյանքում: |
| **Թեմայի բովանդակություն** |
| 1. Հայկական լեռնաշխարհի վաղ պետականությունները Ք.ծ.ա. III-II հազարամյակում. ռազմա-քաղաքական պատմություն:<br>2. Վանի թագավորության ձևավորման աշխարհագրական միջավայրը, պետական կառուցվածքը:<br>3. Վանի թագավորների բարեփոխումները և շինարարական գործունեությունը. բանակ, միասնական դիցարան, թուլացման պատճառները, անկումը:<br>4. Վանի թագավորության քաղաքակրթական ժառանգությունը (մշակույթ և արվեստ):<br>5. Հետադարձ կապ: |

| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|
| • Սկզբնաղբյուրների հետ աշխատանք<br>• երևակայական ճանապարհորդություն<br>• ֆիլմի դիտում և քննարկում<br>• սահիկաշարի կամ տեսանյութի պատրաստում | **Անհատներ և հարաբերություններ**<br><br>Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք:<br>Սովորողները ուսումնասիրում են անհատների կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերությունները՝ ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:<br>**Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայունություն**<br>Ի՞նչ է փոխկապակցվածությունը:<br>Սովորողները ուսումնիրում են մարդու ստեղծած համակարգերի և համայնքների փոխկապակցվածությունը, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, հնարավորությունները, որոշումների ազդեցությունը մարդկության և շրջակա միջավայրի վրա: |

| |
|---|
| **Միջառարկայական կապերը թեմայում** |
| **Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի պետական կազմավորումներ և ժողովուրդներ, հարաբերություններ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր |

| |
|---|
| փաստեր, հավատալիքներ<br>**Աշխարհագրություն** – հնագույն պետական կազմավորումների պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզներ<br>**Հայոց լեզու** – լեզու և գիր, գրային համակարգեր, բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում<br>**Մայրենի** – նշանավոր բնակավայրերի, անհատների վերաբերյալ նյութեր և առասպելներ<br>**Գրականություն** – ավանդազրույցներ, առասպելներ<br>**Արվեստ** -պատմամշակութային հուշարձաններ |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46 |

| |
|---|
| **Թեմա 2** |
| **Հայկազունի Երվանդյանների թագավորությունը: Հայքը Ք.ծ.ա. VII-III դդ. (10 ժամ)** |
| **Նպատակ** |
| Աշակերտը կուսումնասիրի Ք.ծ.ա. VII-III դդ. հայկական քաղաքակրթության զարգացման ընթացքն և առանձնահատկությունները, ակնառու գործիչներին, կիամեմատի տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, կարծիք կիայտնի դրանց արդյունքների ու հետևանքների վերաբերյալ, կգնահատի Երվանդյան Հայաստանի քաղաքակրթական ձեռքբերումները, տեղն ու դերը հայոց պատմության մեջ: |
| **Վերջնարդյունք** |
| Գիտելիք<br>7.2.1. Ուսումնասիրի Հայկազունի Երվանդունիների թագավորության ձևավորման և զարգացման գործընթացները, ունեցած ձեռքբերումները, ներդրումը հայ ժողովրդի պատմության մեջ:<br>Արժեհամակարգ-մարտահրավեր:<br>7.2.2. Ուսումնասիրի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր թագավորության հաղթահարած մարտահրավերների վերաբերյալ՝ ձևավորելով գիտելիքահեն մտածողություն մարտահրավերները հաղթահարելու համար:<br>Հմտություն-աղբյուրագիտական հետազոտություն:<br>7.2.3. Ձևավորի զանազան վստահելի պատմական աղբյուրներ և տեքստեր որոնելու հմտություն: |
| **Թեմայի բովանդակություն** |

1. Հայկազունի Երվանդյանների թագավորության ձևավորման պատմաաշխարհագրական միջավայրը:
2. Հայկազունի Երվանդյանների թագավորության հիմնադրումը:
3. Հայաստանի և Աքեմենյան Պարսկաստանի հարաբերությունները: Հայաստանը Աքեմենյան տերության կազմում:
4. Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և Հայկազունի Երվանդյանների թագավորության վերականգնումը:
5. Հայկական թագավորությունները Ք.ծ.ա. III դարում: Ներքին և արտաքին մարտահրավերները:
6. Հայկազունի Երվանդյանների թագավորության տնտեսությունը, հասարակական կյանքը, առօրյա կյանքն ու կենցաղը, պետական կարգը, բանակը:
7. Երվանդյան Հայաստանի մշակութային ժառանգությունը:
8. Հետադարձ կապ:

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| • Սկզբնաղբյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն<br>• սահիկաշարի կամ տեսանյութի պատրաստում<br>• երևակայական ճանապարհորդություն<br>ֆիլմի դիտում և քննարկում | **Անհատական և մշակութային արտահայտում**<br>Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները հանրահռչակելու, պահպանելու, զարգացնելու և փոխանցելու անհրաժեշտությունը: |

| **Միջառարկայական կապերը թեմայում** |
|---|
| **Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի երկրներ և ժողովուրդներ (Մարաստան, Աքեմենյան տերություն, Մակեդոնական տերություն, Սելևկյան պետություն), հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ<br>**Աշխարհագրություն** - Հայկազունի Երվանդյանների թագավորության, Աքեմենյան տերության, Մակեդոնական տերության, Սելևկյան պետության, պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզներ<br>**Հասարակագիտություն** - «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր» թեմա<br>**Հայոց լեզու** – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում<br>**Մայրենի** – նշանավոր բնակավայրերի, անհատների վերաբերյալ նյութեր և առասպելներ, ավանդազրույցներ<br>**Գրականություն** - հայոց պատմության նշանավոր գործիչներին և իրադարձություններին նվիրված ստեղծագործություններ<br>**Արվեստ** (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ) - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի** |

| վերջնարդյունքների հետ |
| --- |
| Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46 |

| Թեմա 3 |
| --- |
| **Հայկական թագավորությունները Ք.ծ.ա. II-I դդ. (14 ժամ)** |
| **Նպատակ** |
| Աշակերտը կուսումնասիրի Հայկական թագավորությունները Ք.ծ.ա. II-I դդ. դարերում, հայկական քաղաքակրթության զարգացման ընթացքն ու առանձնահատկությունները, ակնառու պատմական գործիչներին, համեմատի տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, կարծիք հայտնի դրանց արդյունքների ու հետևանքների վերաբերյալ, գնահատի Մեծ Հայքի Արտաշեսյանների թագավորության քաղաքակրթական ձեռքբերումները, տեղն ու դերը հայոց պատմության մեջ: |
| **Վերջնարդյունք** |
| Գիտելիք<br>7.3.1. Ուսումնասիրի Հայկական թագավորությունների ձևավորման, զարգացման, անկման քաղաքական, տնտեսական, մշակությանին պատմությունը, դիտարկելով համաշխարհային պատմության հոլովույթում:<br>Արժեհամակարգ-առաջնորդություն<br>7.3.2. Ուսումնասիրի Հայկական թագավորությունների պատմությունը և արքայատոհմերի ունեցած կարևոր ներդրումը ոչ միայն տարածաշրջանում, այլ նաև հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի բնագավառներում, կձևավորի բանիմաց վերաբերմունք առաջնորդություն արժեհամակարգի վերաբերյալ:<br>Հմտություն- պատմական աղբյուրների վերլուծում<br>7.3.3.Ընթերցի և կիրառի ԾՆԱՍ մոդելը, ձևավորի պատմական տեքստերը ընթերցելու և վերլուծելու համակարգված հմտություն: |
| **Թեմայի բովանդակություն** |
| 1. Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորության ձևավորման պատմաաշխարհագրական միջավայրը, հիմնադրումը, զարգացումը:<br>2. Հայկական աշխարհակալ տերությունը. սահմանները, տարածքը, կառավարման համակարգը, բանակը, բնակչությունը:<br>3. Հայաստանը ինքնուրույն դերակատար աշխարհաքաղաքական իրողություններում:<br>4. Հայկական թագավորությունները (Փոքր Հայք, Ծոփք, Կոմմագենե):<br>5. Առօրյա կյանքն ու կենցաղը, հասարակական հարաբերությունները:<br>6. Արտաշեսյան թագավորության թուլացումն ու անկումը: |

7. Մեծ Հայքի Արտաշեսյանների թագավորության մշակութային ժառանգությունը:
8. Հելլենիստական դարաշրջանը Հայաստանում: Հայկական մշակույթի զարգացման առանձնահատկություններն ու ձեռքբերումները Հայկազունի Երվանդունիների և Արտաշեսյանների օրոք:
9. Հետադարձ կապ:

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| • էսսեի, ակնարկի պատրաստում<br>• նկարի վերլուծություն<br>• դաս-էքսկուրսիա<br>• համեմատական աշխատանք Երվանդունիների և Արտաշեսյանների պետությունների վերաբերյալ: | **Համակարգ (Պետություն)**<br>Դիտարկել պետությունը որպես հասարակության միասնական քաղաքական համակարգ:<br>**Կառուցվածք և գործառույթ**<br>Պետական կառավարման կառուցվածքը և պաշտոնյաների գործառույթները |

**Միջառարկայական կապերը թեմայում**

**Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի երկրներ (Սելևկյան պետություն, Պարթևստան, Պոնտոս, Փյունիկիա, Հրեաստան, Ասորիք, Վիրք, Աղվանք, Հռոմեական կայսրություն, Եգիպտոս և այլն), հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ
**Աշխարհագրություն** - Մեծ Հայքի Արտաշեսյաննների թագավորության պատմաաշխարհագրական տարածքին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզների հետ աշխատանք
**Հասարակագիտություն** - «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր», «Մարդ ճաշակ-մշակույթ» թեմաներ
**Հայոց լեզու** - բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում
**Մայրենի** – նշանավոր բնակավայրերի, անհատների վերաբերյալ նյութեր, ավանդազրույցներ
**Գրականություն** – հայոց պատմության նշանավոր գործիչներին և իրադարձություններին նվիրված ստեղծագործություններ, առասպելներ
**Մաթեմատիկա** – հայոց պատմության առանցքային իրադարձությունների տարեթվերի հաշվման և տարբեր չափումների վերաբերյալ առաջադրանքներ, խնդիրներ
**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ, թատրոն)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ**

Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46

**Թեմա 4**

| **Մեծ Հայքի Արշակունիների թագավորությունը (14 ժամ)** |
|---|
| **Նպատակ** |
| Աշակերտը կուսումնասիրի Մեծ Հայքի Արշակունիների թագավորության ժամանակաշրջանում հայկական քաղաքակրթության զարգացման ընթացքն ու առանձնահատկությունները, ակնառու գործիչներին, համեմատի տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, կարծիք հայտնի դրանց արդյունքների ու հետևանքների վերաբերյալ, գնահատի Մեծ Հայքի Արշակունիների թագավորության քաղաքակրթական ձեռքբերումները, տեղն ու դերը հայոց պատմության մեջ: |
| **Վերջնարդյունք** |
| Գիտելիք<br>7.4.1. Ուսումնասիրի I-V դարերի հայ ժողովրդի պատմությունը, վերլուծելով միջազգային իրադրությունը, կատարի անդրադարձ դրանð թագավորների գործունեությանը, նոր արքայատոհմի հաստատմանը, զարգացմանը և անկմանը. Արշակունյաց արքայատոհմի ունեցած պատմական նշանակությունը հայ ժողովրդի կյանքում:<br>Արժեհամակարգ-հաստատակամություն<br>7.4.2. Ուսումնասիրի այս ժամակաշրջանի հայ ժողովրդի պատմությունը, ձևավորի բանիմաց վերաբերմունք հաստատակամություն արժեհամակարգի վերաբերյալ, որը ուներ հայ ժողովուրդը իր անկախ պետականությունը վերականգնելու համար մղվող պայքարում դրանð թագավորների օրոք, Արշակունյաց թագավորները և սպարապետները հայրենիքի անկախության և կրոնական ինքնության պահպանման համար մղված պայքարում:<br>Հմտություն-վերլուծական հմտություն<br>7.4.3. Ընթերցի և դասընկերների հետ գրավոր ու բանավոր աշխատանքների միջոցով վերլուծի, քննարկի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր՝ ձևավորելով վերլուծական հմտություն: |
| **Թեմայի բովանդակություն** |
| 1. Աշխարհաքաղաքական իրադրությունը Մերձավոր Արևելքում: Հայկական պետությունը դրանð արքաների օրոք:<br>2. Պարթևա-հռոմեական հակամարտությունը և Հայաստանը: Արշակունիների արքայատոհմի գահակալումը Հայաստանում:<br>3. Արշակունիների ժառանգական իշխանության հաստատումը:<br>4. Հայ-պարսկական և հայ-հռոմեական հարաբերությունները 3-4-րդ դարում:<br>5. Ավատատիրական հարաբերությունների ձևավորումն ու առանձնահատկությունները:<br>6. Թագավորական իշխանության հզորացումը, թուլացումն ու անկումը:<br>7. Առօրյա կյանքն ու կենցաղը, հասարակական հարաբերությունները:<br>8. Մեծ Հայքի Աշակունիների թագավորության մշակութային ժառանգությունը:<br>9. Հետադարձ կապ: |

**Քրիստոնեությունը հայոց քաղաքակրթության հիմնասյուն**

1. Քրիստոնեության առաջացումը և տարածումը:
2. Քրիստոնեական վարդապետությունը: Աստվածաշունչ:
3. Քրիստոնեության տարածումը Հայաստանում և հայաբնակ շրջաններում I-III դարերում: Աբգար թագավոր, սբ. Թադեոս և սբ. Բարդուղիմեոս առաքյալներ: Առաջին նահատակները (Ոսկյանք և Սուքիասյանք): Արտազի եպիսկոպոսական աթոռը:
4. Հայ առաքելական եկեղեցու հիմնադրումը:
5. Հայաստանը՝ առաջին քրիստոնյա պետություն. սբ. Տրդատ Մեծ և սբ. Գրիգոր Լուսավորիչ:
6. Հայոց եկեղեցական կառույցի ձևավորումն ու ամրապնդումը:
7. Աշխարհիկ և հոգևոր կառույցների հարաբերությունները IV դարում և V դարի սկզբին: Աշտիշատի ազգային-եկեղեցական ժողովը:
8. Հայոց եկեղեցու դերի ու ազդեցության ընդլայնումը տարածաշրջանում:
9. Հետադարձ կապ:

| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
| --- | --- |
| • Սկզբնաղբյուրների հետ աշխատանք,<br>• սահիկաշարի կամ տեսանյութի պատրաստում<br>• երևակայական ճանապարհորդություն<br>• ֆիլմի դիտում և քննարկում<br>• հետազոտական աշխատանք<br>• դաս-էքսկուրսիա | **Անհատական և մշակութային արտահայտում**<br>Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը: |

**Միջառարկայական կապերը թեմայում**

**Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի երկրներ, հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ:
**Աշխարհագրություն** – Մեծ Հայքի Արշակունիների թագավորության, Պարթևստանի, Բյուզանդիայի պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն մեր օրերում, քարտեզի հետ աշխատանք:
**Հասարակագիտություն** - «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր», «Մարդ-բարոյականություն-արժեք», «Մարդ- ճաշակ-մշակույթ» թեմաներ:
**Հայոց լեզու** –բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում, դրանց հիմնական գաղափարի ըմբռնում:
**Մայրենի** – նշանավոր բնակավայրերի, անհատների վերաբերյալ նյութեր և ավանդազրույցներ
**Գրականություն** – հայոց պատմության նշանավոր գործիչներին և իրադարձություններին նվիրված ստեղծագործություններ, պատմավեպեր և այլն:
**Մաթեմատիկա** – հայոց պատմության առանցքային իրադարձությունների տարեթվերի հաշվման և տարբեր չափումների վերաբերյալ բազմաբնույթ առաջադրանքներ, խնդիրներ:
**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր:

| Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ |
| --- |
| Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46 |

| **Թեմա 5** |
| --- |
| **Հայկական պետականության նախարարական շրջանը (10 ժամ)** |
| **Նպատակ** |
| Աշակերտը կուսումնասիրի V դարի երկրորդ քառորդից մինչև IX դարի կեսերն ընկած ժամանակաշրջանի հայկական քաղաքակրթության զարգացման ընթացքը և առանձնահատկությունները, օտար տիրապետությունների դեմ մղված ազատագրական պայքարի փուլերը, կիամեմատի ազատագրական պայքարի շրջափուլերը, կարծիք կհայտնի դրանց արդյունքների ու հետևանքների վերաբերյալ, կգնահատի տեղն ու դերը հայոց պատմության մեջ: |
| **Վերջնարդյունքներ** |
| Գիտելիք<br>7.5.1. Ուսումնասիրի V-IX դդ. հայ ժողովրդի պատմությունը՝ անդրադառնալով Արշակունյաց արքայատոհմից հետո հաստատված նախարարական կառավարման համակարգի գործունեությանը, հայ ժողովրդի կրոնական ինքնությանը սպառնացող վտանգներին և լուծման ուղիներին, միջազգային իրավիճակի փոփոխությանը և դրա հետևանքների դրսևորումներին հայ ժողովրդի կյանքում միասնական պետականության բացակայության պայմաններում նորարար մշակութային ինքնության ձևավորմանը:<br>Արժեհամակարգ-հնարամտություն<br>7.5.2. Ուսումնասիրելով տվյալ ժամանակաշրջանի հայ ժողովրդի պատմությունը՝ ձևավորի բանիմաց վերաբերմունք հնարամտություն արժեհամարգի վերաբերյալ, որը դրսևորվեց հայ ժողովրդի պատմության տվյալ ժամակաշրջանում և՛ քաղաքական, և՛ մշակութային բնագավառներում:<br>Հմտություն-խնդիրներ լուծելու հմտություն<br>7.5.3. Հետազոտի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր հայ ժողովրդի պատմության տվյալ շրջափուլի վերաբերյալ, վերլուծի և ձևավորի խնդիրներ լուծելու հմտություն՝ ուսումնասիրելով նշված ժամանակահատվածում առաջացած խնդիրների լուծումների օրինակները: |
| **Թեմայի բովանդակություն** |
| 1. Տարածաշրջանի քաղաքական դրությունը, Հայաստանի ներքին ու արտաքին քաղաքական իրավիճակը V-IX դդ:<br>2. Մարզպանական Հայաստանը և Պարսկաստանը: |

3. Վարդանանց պատերազմը: Ավարայրի ճակատամարտը:
4. Վահանանց ապստամբությունը: Նվարսակի պայմանագիրը: Ինքնիշխանության վերականգնումը Արևելյան Հայաստանում
5. Տիեզերական ժողովները և Հայոց եկեղեցին:
6. Ընդհանրական եկեղեցու պառակտումը: Քաղկեդոնի ժողովը և Հայոց եկեղեցու դիրքորոշումը. Դվինի եկեղեցական ժողովները:
7. Հայոց եկեղեցու դերն ու ազդեցության ընդլայնումը տարածաշրջանում:
8. Դրությունը Արևմտյան Հայաստանում VI դ.:
9. Պարսկա-բյուզանդական պատերազմը և Հայաստանը:
10. Արաբական նվաճումները և Հայաստանը:
11. Հայաստանը Արաբական խալիֆայության կազմում: Հակաարաբական ապստամբությունները:
12. Հայոց եկեղեցին և աղանդավորական շարժումները (մծղնեականներ, բորբորիտներ, պավլիկյաններ):
13. Տնտեսությունը, առօրյա կյանքն ու կենցաղը, հասարակական հարաբերությունները Հայաստանում V-IX դարերում:

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| • սկզբնաղբյուրների հետ աշխատանք,<br>• պաստառների ձևավորում,<br>• նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում,<br>• էսսեների, ակնարկների պատրաստում: | **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ**<br>Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: |

**Միջառարկայական կապերը թեմայում**

**Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի երկրներ (Պարսկաստան, Բյուզանդիա, Արաբական խալիֆայություն, Վրաստան, Աղվանք) հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ
**Աշխարհագրություն** - Արաբական խալիֆայության, Բյուզանդիայի պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզների հետ աշխատանք
**Հասարակագիտություն** - «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր», «Մարդ-բարոյականություն-արժեքր» թեմաներ

**Հայոց լեզու** – բանավոր և գրավոր  ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում
**Մայրենի –** նշանավոր բնակավայրերի, անհատների վերաբերյալ նյութեր և ավանդազրույցներ
**Գրականություն** – հայոց պատմության նշանավոր գործիչներին և իրադարձություններին նվիրված ստեղծագործություններ, պատմիչների գործեր,  պատմավեպեր
**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ**

Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46

**Թեմա 6**

**Հայոց մշակույթը V-IX դդ. (14 ժամ)**

**Նպատակ**

Աշակերտը կուսումնասիրի V-IX դարերի մշակույթի զարգացման ընթացքը, ուղղությունները, բնագավառներն ու ձեռքբերումները, մշակութային գործիչներին և նրանց ստեղծագործությունները, բացատրի գրերի գյուտի պատմական նշանակությունը, արժևորի ոսկեդարյան մշակույթի ձեռքբերումները հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում:

**Վերջնարդյունք**

Գիտելիք
7.6.1 Ուսումնասիրի V-IX դարերի մշակույթի զարգացման ընթացքը, ուղղությունները, բնագավառները, ձեռքբերումները, մշակութային գործիչներին ու նրանց ստեղծագործությունները:
7.6.2. Բացատրի գրերի գյուտի պատմական նշանակությունը:
7.6.3. Արժևորի ոսկեդարյան մշակույթի ձեռքբերումները հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում:
Արժեհամակարգ-առաքինություն
7.6.4. Ուսումնասիրի քրիստոնեական ազգային մշակույթը՝ ձևավորի բանիմաց վերաբերմունք առաքինություն արժեհամակարգի վերաբերյալ:
Հմտություն-համագործակցելու հմտություն
7.6.5. Ուսումնասիրի գրավոր և բանավոր զանազան պատմական,  աստվածաբանական աղբյուրներ և տեքստեր համագործակցային աշխատանքների միջոցով՝ ձևավորի համագործակցելու հմտություն:

| |
|---|
| Գործողություն-<br>7.6.6. Ուսումնասիրի իր համայնքը և ներկայացնի համայնքի այն ներկայացուցների գործունեությունը, որը ըստ աշակերտի համարվում է առաքինի: |
| **Թեմայի բովանդակություն** |
| 1. Մշակութային իրավիճակը Հայաստանում V դարում: Հայոց գրերի, հայալեզու դպրության ստեղծման անհրաժեշտությունը:<br>2. Սբ. Մեսրոպ Մաշտոցը և Հայոց այբուբենի ստեղծումը:<br>3. Հայոց մշակույթի ոսկեդարը:<br>4. Հայկական մշակույթի կարևոր ձեռքբերումները:<br>5. Հետադարձ կապ |

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| • սկզբնաղբյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն<br>• պաստառների ձևավորում<br>• նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում,<br>• գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում | • **Անհատական և մշակութային արտահայտում**<br>Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը: |

| |
|---|
| **Միջառարկայական կապերը թեմայում** |
| **Համաշխարհային պատմություն** – տվյալ ժամանակաշրջանի քաղաքական և մշակութային գործիչներ, ստեղծագործություններ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր<br>**Աշխարհագրություն** - հայ մշակութային գործիչների գոծունեություն ծավալած քաղաքներին, երկրներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզների հետ աշխատանք<br>**Հասարակագիտություն** - «Մարդ ճաշակ-մշակույթ» թեմա<br>**Հայոց լեզու** – Լեզու և գիր, բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում, դրանց հիմնական գաղափարի ըմբռնում<br>**Մայրենի** – նշանավոր անհատների, իրադարձությունների վերաբերյալ նյութեր<br>**Գրականություն** – պատմիչներ, թարգմանական գրականություն, աստվածաբաններ<br>**Բնագիտություն**-տիեզերքին, երկիր մոլորակին առնչվող թեմաներ<br>**Մաթեմատիկա** – հայոց պատմության առանցքային իրադարձությունների տարեթվերի և տարբեր չափումների տարեթվերի հաշվման վերաբերյալ առաջադրանքներ, խնդիրներ<br>**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր |

| Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ |
|---|
| Հ 16, Հ 17, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 45, Հ 46 |

| Թեմա 7 |
|---|
| **Բագրատունյաց թագավորությունը (14 ժամ)** |
| **Նպատակ** |
| Աշակերտը կուսումնասիրի Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում հայկական քաղաքակրթության զարգացման ընթացք, զարգացումն ու առանձնահատկությունները, պատմական գործիչներին, կհամեմատի տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, կարծիք կհայտնի դրանց արդյունքների ու հետևանքների վերաբերյալ, կգնահատի Բագրատունյաց թագավորության քաղաքակրթական ձեռքբերումները, տեղն ու դերը պատմության մեջ: |
| **Վերջնարդյունք** |
| Գիտելիք<br>7.7.1. Ուսումնասիրի Բագրատունյաց թագավորության հաստատման, զարգացման և անկման գործընթացները, համաշխարհային և տեղական պատմական մի շարք գործընթացների պատճառահետևանքային կապերը, թագավորության ունեցած ներդրումը պատմության մեջ:<br>Արժեհամաարգ-ձեռքբերում:<br>7.7.2. Վերլուծի Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում հայ ժողովրդի ունեցած ձեռքբերումները, ձևավորի իմացություն «ձեռքբերում» արժեհամակարգի վերաբերյալ:<br>Հմտություն-պատմական տեքստեր վերլուծելու հմտություն:<br>7.7.3. Հետազոտի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր՝ ձևավորի համակարգային վերլուծական հմտություն պատմական աղբյուրներ և տեսքտեր ընթերցելու վերաբերյալ: |
| **Թեմայի բովանդակություն** |
| 1. Պատմաաշխարհագրական միջավայրը, տարածաշրջանի քաղաքական դրությունը:<br>2. Պետության վերականգնումը: Բագրատունիների արքայատոհմի հաստատումը. ներքին և արտաքին մարտահրավերներ: Ենթակա թագավորությունների առաջացումը: Անիի թագավորության թուլացումն ու անկումը:<br>3. Հայոց եկեղեցին Բագրատունյաց ժամանակաշրջանում:<br>4. Թոնդրակյան շարժումը:<br>5. Բագրատունյաց թագավորության պետական կառավարման համակարգը, բանակը տնտեսությունը:<br>6. Առօրյա կյանքն ու կենցաղը, հասարակական հարաբերությունները:<br>7. Բագրատունյաց թագավորության մշակութային ժառանգությունն ու ազդեցությունը մեր օրերի վրա:<br>8. Հետադարձ կապ: |

| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|
| • սկզբնաղբյուրների հետ աշխատանք,<br>• նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում,<br>• գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում<br>• երևակայական ճանապարհորդություն<br>• նկարի վերլուծություն | • **Համակարգ (Պետություն)**<br>Դիտարկել պետությունը որպես հասարակութան միասնական քաղաքական համակարգ:<br>• **Կառուցվածք և գործառույթ**<br>Պետական կառավարման կառուցվածքը և պաշտոնյաների գործառույթները<br>• **Անհատական և մշակութային արտահայտում**<br>Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը: |

**Միջառարկայական կապերը թեմայում**

**Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի երկրներ հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ:
**Աշխարհագրություն** - Բագրատունյաց թագավորության, Արաբական խալիֆայության, Բյուզանդիայի պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզների հետ աշխատանք:
**Հասարակագիտություն** - «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր», «Մարդ-բարոյականություն-արժեք», «Մարդ ճաշակ-մշակույթ» թեմաներ:
**Հայոց լեզու** – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում:
**Մայրենի** – նշանավոր բնակավայրերի, անհատների վերաբերյալ նյութեր և ավանդազրույցներ:
**Գրականություն** – հայոց պատմության նշանավոր գործիչներին և իրադարձություններին նվիրված ստեղծագործություններ, պատմիչների գործեր, պատմավեպեր:
**ՆԶՊ** - զենքեր, ռազմարվեստ, մարտավարություն:
**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ**

Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46

**Թեմա 8**

**Հայաստանը XI-XIV դարերում (8 ժամ)**

**Նպատակ**

Աշակերտը կուսումնասիրի XI դարի երկրորդ կեսից մինչև XIV դարերն ընկաշ ժամանակաշրւանի հայկական քաղաքակրթության զարգացման ընթացքը, զարգացումն ու անկման առանձնահատկությունները, համեմատի և վերլուծի տվյալ ժամանակաշրջանի

պատմական և հասարակական կարևոր իրադարձությունները, դրանց արդյունքները, հետևանքները, գնահատի ձեռքբերումներն ու բացթողումները, տեղն ու դերը պատմության մեջ:

**Վերջնարդյունք**

Գիտելիք

7.8.1. Ուսումնասիրի XI-XIV դարերում տարածաշրջանում հաստատված աշխարհաքաղաքական իրադրությունը, պատմական կարևոր գործընթացները, որոնք տեղի ունեցան տվյալ ժամակաշրջանում և իրենց ազդեցությունը թողեցին հայ ժողովրդի պատմական զարգացման ընթացքի վրա:

Արժեհամակարգ-հաստատակամություն

7.8.2. Վերլուծի տարբեր պատմական աղբյուրներ՝ ձևավորի բանիմաց վերաբերմունք հաստատակամություն արժեհամակարգի վերաբերյալ:

Հմտություն-աղբյուրագիտական վերլուծություն

7.8.3. Ձևավորի պատմական աղբյուրները հետազոտելու և վերլուծելու հմտություն:

**Թեմայի բովանդակություն**

1. Իրադրությունը տարածաշրջանում և Հայաստանում Անիի թագավորության անկումից հետո: Հայկական թագավորությունները և իշխանությունները:
2. Թյուրք-սելջուկները և Հայաստանը: Զանգվածային արտագաղթը:
3. Հայաստանը Զաքարյանների օրոք:
4. Մոնղոլական արշավանքները. Հայաստանի քաղաքական իրավիճակը XIII  դարի կեսերին և XIV դարում:
5. Տնտեսությունը, առօրյա կյանքն ու կենցաղը, հասարակական հարաբերությունները Հայաստանում XI-XIV դարերում:
6. Հայոց եկեղեցին զարգացած միջնադարում:
7. Հայկական մշակույթի վերելքի  նախադրյալները X-XIV դդ.: Հայոց մշակույթի Արծաթե դարը:
8. Հայկական համալսարանները և կրթական կենտրոնները:
9. Հայկական մշակույթի հիմնական ձեռքբերումները. հայկական մշակույթի ազդեցությունը աշխարհում, նշանակությունը:
10. Հետադարձ կապ:

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| • Սահիկաշարերի պատրաստում<br>• պաստառների ձևավորում<br>• նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում<br>• բանավեճեր, քննարկումներ | **Օրինաչափություն**<br>Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ:<br>**Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ**<br>Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, |

| | |
|---|---|
| | երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: |
| **Միջառարկայական կապերը թեմայում** | |
| **Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի երկրներ, հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր, փաստեր:<br>**Աշխարհագրություն** - քարտեզների հետ աշխատանք:<br>**Հայոց լեզու** – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում:<br>**Մայրենի** –նշանավոր անհատների, իրադարձությունների վերաբերյալ նյութեր:<br>**Գրականություն** –նշանավոր գործիչներին և իրադարձություններին նվիրված ստեղծագործություններ, պատմիչների գործեր:<br>**ՆԶՊ**- ռազմարվեստ, մարտավարություն:<br>**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ, թատրոն)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր: | |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ** | |
| Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46 | |

**8-րդ դասարան (առաջարկվող ժամաքանակ 102 ժամ)**

1. Կիլիկիայի հայկական պետությունը (18 ժամ)
2. Հայաստանը XV - XVII դդ. (12 ժամ)
3. Հայաստանի ազատագրության ուղիները (XVIII դ.) (12 ժամ)
4. Հայ ժողովուրդը և Հայաստանը XIX դարում (18 ժամ)
5. Ազգային մշակույթը Մայր հայրենիքում և գաղթօջախներում (XV դարից մինչև XX դարի սկիզբ) (14 ժամ)

| **Թեմա 1** |
|---|
| **Կիլիկիայի հայկական պետությունը (18 ժամ)** |
| **Նպատակ** |
| Աշակերտը կուսումնասիրի Կիլիկիայում հայկական քաղաքակրթության զարգացման |

ընթացքի և առանձնահատկությունների, ակնառու պատմական գործիչների վերաբերյալ, համեմատել տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, վերլուծել դրանց արդյունքներն ու հետևանքները, գնահատել Կիլիկյան Հայաստանի քաղաքակրթական ձեռքբերումները, տեղն ու դերը հայոց պատմության մեջ:

**Վերջնարդյունք**

Գիտելիք

8.1.1. Ուսումանսիրի Կիլկիայի հայկան պետականության ձևավորման, զարգացման և անկման գործընթացները, պատճառահետևանքային կապերը:

Արժեհամակարգ-կարողություն

8.1.2. Ուսումնասիրի տվյալ ժամակաշրջանի վերաբերյալ զանազան պատմական աղբյուրները և տեքստերը, ձևավորի բանիմաց վերաբերմունք կարողություն հասկացություն վերաբերյալ, որը օգնեց Հայկական լեռնաշխարհից հեռու հայ իշխաններին ու բնակչությանը ստեղծել մի նոր պետություն:

Հմտություն-խնդիրներ լուծելու հմտություն

8.1.3. Հետազոտի հայ իշխանների և թագավորների գործունեությունը և վերլուծի այն խնդիրները և լուծումները, որոնց առնչվում էին հայ իշխանները ու թագավորները՝ ձևավորելով խնդիրներ լուծելու հմտություն:

**Թեմայի բովանդակություն**

1. Պատմաաշխարհագրական տարածքը: Աշխարհաքաղաքական իրավիճակը: Կիլիկիայում հայկական պետության ստեղծման ներքին և արտաքին նախադրյալները:
2. Ռուբինյան իշխանության առաջացումը և ամրապնդումն ու հզորացումը: Թագավորության հռչակումը:
3. Հայրապետական աթոռի հաստատումը Կիլիկյան Հայաստանում:
4. Հեթումյան արքայատոհմի հաստատումը: Հայ-մոնղոլական հարաբերությունները:
5. Կիլիկիայի հայկական պետության գոյությանը սպառնացող մարտահրավերները: Ներքին ճգնաժամի խորացումը: Թագավորության թուլացումն ու անկումը:
6. Կիլիկիայի հայկական պետության պետական կառավարման համակարգը, բանակը, տնտեսությունը, առօրյա կյանքն ու կենցաղը, հասարակական հարաբերությունները:
7. Կիլիկիայի հայկական թագավորության մշակութային ժառանգությունը:
8. Հայկական մշակույթի հիմնական ձեռքբերումները. հայկական մշակույթի ազդեցությունը աշխարհում, նշանակությունը:
9. Հետադարձ կապ:

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| • նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում | **Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում** Դիտարկել հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական |

<table>
<tr>
<td>

- երևակայական ճանապարհորդություն
- ֆիլմերի դիտում և քննարկում
- նկարի վերլուծություն
- խնդիրների առաջադրում և լուծումների ներկայացում ու քննարկում
- ռեֆերատ

</td>
<td>

գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա:

**Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ**

Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:

**Անհատական և մշակութային արտահայտում**

Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը:

</td>
</tr>
<tr>
<td colspan="2">

**Միջառարկայական կապերը թեմայում**

</td>
</tr>
<tr>
<td colspan="2">

**Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի երկրներ, հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ․ դեպքեր փաստեր<br>
**Աշխարհագրություն** - Կիլիկյան Հայաստանի, Բյուզանդիայի, Մոնղոլական տերության պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզների հետ աշխատանք<br>
**Հասարակագիտություն** - «Մարդ ճաշակ-մշակույթ», «Արժեքներ», «Մտածողություն, հուզական բանականություն և վարք», «Հետազոտական և կառավարչական հմտություններ» թեմաներ<br>
**Հայոց լեզու** - բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում, դրանց հիմնական գաղափարի ըմբռնում<br>
**Մայրենի** - նշանավոր անհատների, իրադարձությունների վերաբերյալ նյութեր<br>
**Գրականություն** - հեղինակներ, նշանավոր գործիչներին և իրադարձություններին նվիրված ստեղծագործություններ<br>
**ՆԶՊ** - զենքեր, ռազմարվեստ, մարտավարություն<br>
**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ, թատրոն)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր

</td>
</tr>
<tr>
<td colspan="2">

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ**

</td>
</tr>
<tr>
<td colspan="2">

Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46

</td>
</tr>
</table>

| **Թեմա 2** |
|---|
| **Հայաստանը XV - XVII դդ. (12 ժամ)** |
| **Նպատակ** |
| Աշակերտը կուսումնասիրի XV-XVII դար ընկած ժամանակահատվածում հայկական քաղաքակրթության զարգացման ընթացքը և առանձնահատկությունները, Հայաստանի ազատագրության և պետության վերականգնման նպատակով իրականացված ձեռնարկումները, համեմատի տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, վերլուծի դրանց արդյունքներն ու հետևանքները, գնահատի ձեռքբերումներն ու բացթողումները, դրանց տեղն ու դերը Հայոց պատմության մեջ: |
| **Վերջնարդյունք** |
| Գիտելիք<br>8.3.1. Նկարագրի տարածաշրջանի քաղաքական դրությունը, Հայաստանի ներքին և արտաքին իրավիճակը XV-XVII դդ. ընկած ժամանակահատվածում:<br>8.3.2. Բացատրի հարաբերությունները հարևան և աշխարհի երկրների, ժողովուրդների հետ, ուրվագծի հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքային տարբերակներ և կանխատեսի դրանց հետևանքները:<br>Արժեհամակարգ-հաստատակամություն<br>8.3.3. Ուսումնասիրի հայ ժողովրդի XV-XVII դդ. պատմությունը, ձևավորի բանիմաց վերաբերմունք հաստատակամություն արժեհամակարգի նկատմամբ, որը առաջնորդում էր հայ ժողովրդին այս ժամանակաշրջանում պետականությունը վերականգնելու ճանապարհին:<br>Հմտություն-համագործակցելու<br>8.3.4. Զույգերով կամ թիմերով ուսումնասիրի և վերլուծի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր՝ ձևավորելով համագործակցային հմտություն: |
| **Թեմայի բովանդակություն** |
| 1. Հայաստանի ներքին և արտաքին իրավիճակը XV-րդ դարում:<br>2. Կաթողիկոսական աթոռի վերահաստատումը սբ. Էջմիածնում: Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռները:<br>3. Թուրք-պարսկական պատերազմները XVI-XVII դդ. և Հայաստանը:<br>4. Հայ ազատագրական շարժան նախադրյալներն ու առանձնահատկությունները:<br>5. Պետականության վերականգնմանն ուղղված առաջին ձեռնարկները (Վասպուրական, Աղթամար):<br>6. Հետադարձ կապ: |

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| • սկզբնաղբյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն<br>• պաստառների ձևավորում | **Օրինաչափություն**<br>Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, |

| | |
|---|---|
| • նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում<br>• բանավեճեր, քննարկումներ | ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ:<br>**Անհատներ և հարաբերություններ**<br>Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: |

| |
|---|
| **Միջառարկայական կապերը թեմայում** |
| **Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի երկրներ (թուրքմենական պետություններ, Սեֆյան Պարսկաստան, Օսմանյան կայսրություն) հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր:<br>**Աշխարհագրություն** - Թուրքմենական պետությունների, Սեֆյան Պարսկաստանի, Օսմանյան կայսրության տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզների հետ աշխատանք:<br>**Հասարակագիտություն** - «Մարդ ճաշակ-մշակույթ», «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր», «Մարդ-բարոյականություն-արժեքը», «Մարդ-իրավունք», «Մարդ-տնտեսություն», «Արժեքներ», «Մտածողություն, հուզական բանականություն և վարք», «Հետազոտական և կառավարչական հմտություններ» թեմաներ:<br>**Հայոց լեզու** - բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում:<br>**Գրականություն** - գրողներ, բանաստեղծներ, հայոց պատմության նշանավոր իրադարձություններին, փաստերին, երևույթներին և գործիչներին նվիրված ստեղծագործություններ:<br>**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - կրթության և մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, ձեռքբերումներ, պատմամշակութային հուշարձաններ:<br>**ՆԶՊ** - զենքեր , ռազմարվեստ, մարտավարություն: |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| Հ 16, Հ 17, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46 |
| |
| **Թեմա 3** |
| **Հայաստանի ազատագրության ուղիները (XVIII դ.) (12 ժամ)** |
| **Նպատակ** |

Աշակերտը կուսումնասիրի XVIII դարում հայկական քաղաքակրթության զարգացման ընթացքը և առանձնահատկությունները, Հայաստանի ազատագրության և պետության վերականգնման նպատակով իրականացված ձեռնարկները, համեմատի տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, վերլուծի դրանց արդյունքներն ու հետևանքները, գնահատի ձեռքբերումներն ու բացթողումները, դրանց տեղն ու դերը Հայոց պատմության մեջ:

**Վերջնարդյունք**

Գիտելիք

8.3.1. Նկարագրի տարածաշրջանի քաղաքական դրությունը, Հայաստանի ներքին և արտաքին իրավիճակը XVIII դարում:

8.3.2. Բացատրի հարաբերությունները հարևան և աշխարհի երկրների, ժողովուրդների հետ, ուրվագծի հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքային տարբերակներ և կանխատեսի դրանց հետևանքները:

Արժեհամակարգ-հաստատակամություն

8.3.3. Ուսումնասիրի հայ ժողովրդի XVIII դ. պատմությունը, ձևավորի բանիմաց վերաբերմունք հաստատակամություն արժեհամակարգի նկատմամբ, որը առաջնորդում էր հայ ժողովրդին այս ժամանակաշարջանում պետականությունը վերականգնելու ճանապարհին:

Հմտություն-համագործակցություն

8.3.4. Զույգերով կամ թիմերով ուսումնասիրի և վերլուծի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր՝ ձևավորելով համագործակցային հմտություն:

**Թեմայի բովանդակություն**

7. Հայաստանի ներքին և արտաքին իրավիճակը XVIII դարում:
8. Խնդրագրերից անցում ծրագրերի: Իսրայել Օրու գործունեությունը:
   Կասպիական արշավանքը: Ազատագրական պատերազմն Արցախում:
   Ազատագրական պատերազմը Սյունիքում:
9. Թուրքիայի և Ռուսաստանի շահերի բախումը Անդրկովկասում:
10. Հայկական ինքնավարությունն Արցախում և Սյունիքում: Խամսայի մելիքությունները:
11. Հովսեփ Էմինը և հայ ազատագրական շարժումը:
12. Մադրասի խմբակի քաղաքական հրապարակախոսությունը:
13. Հայաստանի ազատագրության ծրագրերը:
14. Հայ վաճառականությունը և հայ առևտրական կապիտալի դերը միջազգային շուկայում
15. Հետադարձ կապ

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| • սկզբնաղբյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն<br>• պաստառների ձևավորում<br>• նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր | **Օրինաչափություն**<br>Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական |

| | |
|---|---|
| հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում<br>• բանավեճեր, քննարկումներ | երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ:<br>**Անհատներ և հարաբերություններ**<br>Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: |
| **Միջառարկայական կապերը թեմայում** | |
| **Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի երկրներ (Սեֆյան Պարսկաստան, Օսմանյան կայսրություն, Ռուսական կայսրություն, Հնդկաստան, Եվրոպայի երկրներ) հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր:<br>**Աշխարհագրություն** - Սեֆյան Պարսկաստանի, Օսմանյան կայսրության, Ռուսական կայսրության տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզների հետ աշխատանք:<br>**Հասարակագիտություն** - «Մարդ ճաշակ-մշակույթ», «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր», «Մարդ-բարոյականություն-արժեք», «Մարդ-իրավունք», «Մարդ-տնտեսություն», «Արժեքներ», «Մտածողություն, հուզական բանականություն և վարք», «Հետազոտական և կառավարչական հմտություններ» թեմաներ:<br>**Հայոց լեզու** - բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում, դրանց հիմնական գաղափարի ըմբռնում:<br>**Գրականություն** - գրողներ, բանաստեղծներ, հայոց պատմության նշանավոր իրադարձություններին, փաստերին, երևույթներին և գործիչներին նվիրված ստեղծագործություններ:<br>**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - կրթության և մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, ձեռքբերումներ, պատմամշակութային հուշարձաններ<br>**ՆԶՊ** - զենքեր, ռազմարվեստ, մարտավարություն | |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ** | |
| Հ 16, Հ 17, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46 | |

| |
|---|
| **Թեմա 4** |
| **Հայ ժողովուրդը և Հայաստանը XIX դարում (18 ժամ)** |
| **Նպատակ** |
| Աշակերտը կուսումնասիրի XIX դարում հայկական քաղաքակրթության զարգացման ընթացքն ու առանձնահատկությունները: Կհետազոտի Հայկական հարցի միջազգայնացման |

գործընթացը, Հայաստանի ազատագրության և պետության վերականգնման նպատակով իրականացված միջոցառումները, երևույթների, իրադարձությունների, վերլուծել դրանց արդյունքներն ու հետևանքները, գնահատել ձեռքբերումներն ու բացթողումները, դրանց տեղն ու դերը Հայոց պատմության մեջ:

**Վերջնարդյունք**

Գիտելիք

8.4.1. Նկարագրի տարածաշրջանի և Հայաստանի ներքաղաքական ու արտաքին քաղաքական իրավիճակը XIX դարում:

8.4.2. Բացատրի հարաբերությունները հարևան և աշխարհի երկրների, ժողովուրդների հետ, ուրվագծի հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքային տարբերակներ և կանխատեսի դրանց հետևանքները:

Արժեհամակարգ-ազատություն

8.4.3. Ուսումնասիրի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր, ձևավորի բանիմաց վերաբերմունք ազատություն արժեհամակարգի վերաբերյալ, որն առաջնորդում էր հայ ժողովրդին իր պայքարի ճանապարհին:

Հմտություն-համագործակցում

8.4.4. Զույգերով կամ խմբերով ուսումնասիրի և վերլուծի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր՝ ձևավորելով համագործակցելու հմտություն:

**Թեմայի բովանդակություն**

1. Տարածաշրջանի և Հայաստանի ներքաղաքական ու արտաքին քաղաքական իրավիճակը XIX դարի սկզբին: Մեծ տերությունների շահերի բախումն Անդրկովկասում:
2. Հայաստանը XIX դարի սկզբին: Ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմները:
3. Հայաստանի սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական կացությունը Ռուսական և Օսմանյան կայսրությունների կազմում XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին:
4. Արևելահայերի և արևմտահայերի առօրյա կյանքն ու կենցաղը, հասարակական հարաբերությունները XIX դարում-XX դարի սկզբին:
5. 1862 թ. Զեյթունի ապստամբությունը: Զեյթունի բնակչության առօրյա կյանքն ու կենցաղը, հասարակական հարաբերությունները: Արևմտահայերի ազգային սահմանադրությունը:
6. Ռուսաստանի և Օսմանան Թուրքիայի ռազմաքաղաքական ծրագրերը և Հայաստանը: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը: Հայկական հարցը Մեծ տերությունների շահերի կիզակետում:
7. Հայ հասարակական-քաղաքական հոսանքների, ազատագրական խմբակների ու կազմակերպությունների ձևավորումը: Գործունեությունը:
8. Հայ ազգային կուսակցությունների ձևավորումը, ծրագրերը, գործունեությունը:
9. Ազատագրական պայքարի վերելքը: Ֆիդայական շարժումը: Առաջացման նախադրյալները, շարժման ծավալումը:
10. Հայոց ցեղասպանության քաղաքականության սկիզբը Թուրքիայում: Հայության բնաջնջման համիդյան ծրագիրը, ինքնապաշտպանական մարտեր:
11. Հետադարձ կապ:

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող** |
|---|---|

| | **հասկացություններ** |
|---|---|
| • սկզբնաղբյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն<br>• սահիկաշարերի պատրաստում<br>• ֆիլմերի դիտում և քննարկում<br>• նկարի վերլուծություն<br>• խնդիրների առաջադրում և լուծումների ներկայացում ու քննարկում | • **Օրինաչափություն**<br>Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ:<br>• **Անհատներ և հարաբերություններ**<br>Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: |

| **Միջառարկայական կապերը թեմայում** |
|---|
| **Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի երկրներ (Պարսկաստան, Օսմանյան կայսրություն, Ռուսական կայսրություն, Եվրոպական պետություններ), հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր:<br>**Աշխարհագրություն** - Ռուսական կայսրության, Օսմանյան կայսրության, պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզների հետ աշխատանք:<br>**Հասարակագիտություն** - «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր», «Մարդ-իրավունք», «Մարդ-տնտեսություն», «Մտածողություն, հուզական բանականություն և վարք», «Հետազոտական և կառավարչական հմտություններ» թեմաներ:<br>**Հայոց լեզու** - բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում:<br>**Գրականություն** - գրողներ, բանաստեղծներ, հայոց պատմության նշանավոր իրադարձություններին, փաստերին, երևույթներին, և գործիչներին նվիրված ստեղծագործություններ:<br>**ՆԶՊ** - զենքեր, ռազմարվեստ, մարտավարություն |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| Հ 16, Հ 17, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46 |

| **Թեմա 5** |
|---|
| **Ազգային մշակույթը Մայր հայրենիքում և գաղթօջախներում (XV-XX դարի սկիզբ) (14 ժամ)** |

| **Նպատակ** |
|---|
| Աշակերտը կուսումնասիրի XV դարից մինչև XX դարի սկիզբն ընկած ժամանակահատվածում Մայր հայրենիքում և գաղթավայրերում ազգային մշակույթի զարգացման ընթացքը, ուղղությունները: Կհամեմատի և կվերլուծի Մայր հայրենիքում և գաղթավայրերում ազգային մշակույթի զարգացման նախադրյալները, պայմանները, օրինաչափությունները, ընդհանրությունները, առանձնահատկությունները, կգնահատի ազգային մշակույթի ձեռքբերումները հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում: |
| **Վերջնարդյունքներ** |
| Գիտելիք<br>8.5.1. Նկարագրի և բացատրի հայկական գաղթավայրերի ձևավորման պատճառները, համեմատի տարբեր գաղթավայրերի զարգացման առանձնահատկությունները, գաղութահայ հիմնական կենտրոնները, դրանց առջև ծառացած խնդիրները, գնահատի գաղթավայրերի և Հայոց եկեղեցու առանձնահատուկ դերը գաղթավայրերում հայապահպանության և հայկական մշակույթի պահպանման ու զարգացման գործում:<br>Արժեհամակարգ-կարողություն<br>8.5.2. Ներկայացնի և համեմատի տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, արդյունքներն ու հետևանքները, հետևություններ անի հայոց և համաշխարհային պատմական իրադարձությունների փոխկապակցվածության վերաբերյալ, կապեր գտնի արդի պատմական գործընթացներում առկա կարևոր իրադարձությունների և երևույթների հետ:<br>8.5.3.Ներկայացնի և համեմատի Մայր հայրենիքում և գաղթավայրերում ազգային մշակույթի զարգացման նախադրյալները, պայմանները, ընդհանրություններն ու առանձնահատկությունները, օրինաչափությունները, կենտրոնները, գիտության, արվեստի կարևոր բնագավառները:<br><br>8.5.4.Ներկայացնի և արժևորի Մայր հայրենիքում և տարբեր գաղթավայրերում ազգային մշակույթի ձեռքբերումները հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում, գիտակցի ազգային արժեքները պահպանելու, զարգացնելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը:<br>Ճանաչի տվյալ ժամանակաշրջանի ակնառու գործիչների, բնութագրի, համեմատի և գնահատի նրանց գործունեության առանցքային դրվագները:<br>8.5.5.Վերլուծի և գնահատի գրատպության, հայ գրքի, հայ մամուլի, կրթական նշանավոր հաստատությունների դերն ու ազդեցությունը հայ մշակութային, քաղաքական, հասարակական կյանքում, ներկայացնի և քննարկի մշակութային գործիչների ստեղծագործություններից որոշ հատվածներ:<br>8.5.6.Գնահատի Հայոց եկեղեցու և Մխիթարյան միաբանության դերը հայկական մշակույթի, հայագիտության և գիտության տարբեր ճյուղերի զարգացման ու ազգային մշակույթի պահպանման գործում<br><br>8.5.7.Նկարագրի սոցիալ-տնտեսական կյանքի, հասարակական միջավայրի, հասարակական հարաբերությունների առօրյա կյանքի ու կենցաղի առանձնահատկությունները գաղթօջախներում, բացատրի դրանց նմանություններն ու տարբերությունները, կապեր գտնի իր ներկա կյանքի հետ:<br>8.5.8.Կապեր գտնի տվյալ ժամանակաշրջանի ու արդի մշակութային ձեռքբերումների միջև, |

| |
|---|
| ցույց տա իր և սերունդների կապը պատմության մեջ, ըմբռնի մշակույթի շարունակականության կարևորությունը և մշակութային ժառանգորդության յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:<br>8.5.9.Բացատրի կարևոր եզրույթներն ու հասկացությունները, օգտագործի ըստ անհրաժեշտության: |
| **Թեմայի բովանդակություն** |
| 1. Հայկական մշակույթի զարգացումը Մայր հայրենիքում և գաղթավայրերում (կենտրոնները, զարգացման նախադրյալները, պայմանները, առանձնահատկությունները օրինաչափությունները):<br>2. Դպրոցները և կրթական գործը:<br>3. Գիտության զարգացումը (բնական և հասարակական գիտություններ):<br>4. Գրականությունը: Արվեստը:<br>5. Մամուլը:<br>6. Հայոց եկեղեցու դերը գաղթավայրերում և Մայր Հայրենիքում հայապահպանության և ազգային մշակույթի զարգացման ու պահպանման գործում:<br>7. Մխիթարյան միաբանության դերը և կարևորությունը:<br>8. Մշակույթի հիմնական ձեռքբերումները և նշանավոր մշակութային գործիչները:<br>9. Հետադարձ կապ |

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| • սկզբնաղբյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն<br>• պաստառների ձևավորում<br>• նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում<br>• նկարի վերլուծություն | **Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում**<br>Դիտարկել հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա:<br>**Անհատներ և հարաբերություններ**<br>Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: |

| |
|---|
| **Միջառարկայական կապերը թեմայում** |
| **Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի քաղաքական և մշակութային գործիչներ, որոնց գործունեությունը առնչվել է հայ ժողովրդի հետ:<br>**Աշխարհագրություն** - երկրներ, որտեղ հաստատվել են հայկական գաղթավայրեր, այնտեղ բնակվող բնակչությունն այսօր:<br>**Հասարակագիտություն** - «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր», «Մարդ ճաշակ-մշակույթ», «Մարդ-բարոյականություն-արժեք», «Մարդ-իրավունք», «Արժեքներ», «Մտածողություն, հուզական բանականություն և վարք», «Հետազոտական և |

| |
|---|
| կառավարչական հմտություններ» թեմաներ:<br>**Հայոց լեզու** - բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում, դրանց հիմնական գաղափարի ըմբռնում:<br>**Գրականություն** - գրողներ, բանաստեղծներ, ստեղծագործություններ:<br>**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, թատրոն, կիրառական արվեստ)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր: |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| Հ 1, Հ 2, Հ 10 Հ 16, Հ 17, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46 |

**9-րդ դասարան (առաջարկվող ժամաքանակ 136 ժամ)**

1. Հայ ժողովուրդի պատմությունը XX դարի սկզբին (12 ժամ)
2. Հայաստանը անկախության վերականգնման ճանապարհին: Հայաստանի առաջին Հանրապետությունը (18 ժամ)
3. Խորհրդային Հայաստանը 1920-1991 թթ. (24 ժամ)
4. Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը արդի փուլում (24 ժամ)
5. Հայկական սփյուռքը ձևավորումից մինչ մեր օրերը (12 ժամ)
6. Հայացք ապագային. Հայության հարատևման գրավականները (12 ժամ)

| **Թեմա 1** |
|---|
| **Հայ ժողովուրդի պատմությունը XX դարի սկզբին (12 ժամ)** |
| **Նպատակ** |
| Աշակերտը կուսումնասիրի հայ ժողովրդի պատմությունը XX դարի սկզբին, Հայոց ցեղասպանության պատմությունը (շարժառիթներ, պատճառներ, ծրագրեր փուլեր, հետևանքներ, պատմական դասեր, ճանաչման գործընթաց, ինքնապաշտպանական մարտեր), ըմբռնի, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը և արդար հատուցումը Հայաստանի Հանրապետության, ողջ հայության համար ազգային անվտանգության հիմնախնդիր է: |
| **Վերջնարդյունք** |
| Գիտելիք<br>9.1.1. Նկարագրի տարածաշրջանի և համաշխարհային քաղաքական իրադրությունը. Հայաստանի իրավիճակը XX դարի սկզբին:<br>9.1.2. Բացատրի հարաբերությունները հարևան և աշխարհի երկրների, ժողովուրդների, միջազգային տարբեր միությունների, կազմակերպությունների հետ, գտնի արդի աշխարհի |

| |
|---|
| հետ որոշ կապեր, առաջարկի հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքային տարբերակներ, կանխատեսի դրանց հետևանքները:<br>Աշխարհայացք-հաստատակամություն<br>9.1.3. Ուսումնասիրի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր, կձևավորի բանիմաց վերաբերմունք հաստատակամություն արժեհամակարգի վերաբերյալ, որն ուղղորդում էր հայ ժողովրդին ինքնությունը պահպանելու ճանապարհին:<br>Հմտություն-քննական վերլուծակն հմտություն<br>9.1.4. Ուսումնասիրի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր և վերլուծելով դրանք կձևավորի վերլուծական քննական մտածողություն: |
| **Թեմայի բովանդակություն** |
| 1. Ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականության նոր դրսևորումը: Հայ ժողովրդի պայքարը ցարական ինքնակալության դեմ: Հայ-թաթարական բախումները:<br>2. Երիտթուրքերը համիդյան ծրագրի շարունակողներ: Կիլիկիահայության կոտորածները: Պանթյուրքական գաղափարախոսությունը:<br>3. Հայերի մասնակցությունն Առաջին աշխարհամարտին: Կովկասյան ճակատը և կամավորական շարժումը:<br>4. Հայոց ցեղասպանությունը և հայերի հայրենազրկումը:<br>5. 1915 թ. ինքնապաշտպանական մարտերը:<br>6. Մեծ տերությունների, առաջադեմ գործիչների և կազմակերպությունների արձագանքը, Հայոց ցեղասպանության պատասխանատուների դատավարությունը: Նեմեսիս գործողություն<br>7. Կիլիկիահայության աղետը: Ցեղասպանության իրականացման հերթական փուլը:<br>8. Վերազարթոնք. անհատական ճակատագրեր:<br>9. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը: Պահանջատիրություն:<br>10. Ցեղասպանությունը որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն:<br>11. Հետադարձ կապ |

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| • նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում<br>• գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում<br>• երևակայական ճանապարհորդություն<br>• դեպքի ուսումնասիրություն<br>• նկարի վերլուծություն<br>• խնդիրների առաջադրում և լուծումների ներկայացում ու քննարկում<br>• ռեֆերատ | **Օրինաչափություն**<br>Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ:<br>**Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում**<br>Դիտարկել հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց |

| | |
|---|---|
| | ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա: |
| **Միջառարկայական կապերը թեմայում** | |
| **Համաշխարհային պատմություն** - XX դարի սկզբի միջպետական կառույցներ, աշխարհի երկրներ, կոնֆլիկտներ, հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, ձեռքբերումներ և այլն<br>**Աշխարհագրություն** - աշխարհի երկրներ՝ տարածք, բնակչություն. բնակլիմայական պայմաններ, բնական հարստություններ և այլն, քարտեզների հետ աշխատանք<br>**Հասարակագիտություն** - «Արժեքներ», «Մտածողություն, հուզական բանականություն և վարք», «Հետազոտական և կառավարչական հմտություններ» թեմաներ<br>**Հայոց լեզու** - բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում<br>**Գրականություն** - գրողներ, բանաստեղծներ, ստեղծագործություններ<br>**ՆԶՊ** - զենքեր , ռազմարվեստ, մարտավարություն:<br>**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, թատրոն, կիրառական արվեստ)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր: | |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ** | |
| Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 34, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46 | |

| |
|---|
| **Թեմա 2** |
| **Հայաստանը անկախության վերականգնման ճանապարհին: Հայաստանի առաջին Հանրապետությունը** (18 ժամ) |
| **Նպատակ** |
| Աշակերտը կուսումնասիրի XX դարասկզբին հայկական քաղաքակրթական զարգացման ընթացքն ու առանձնահատկությունները, գնահատի Հայաստանի առաջին Հանրապետության ձեռքբերումներն ու բացթողումները աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում, տեղն ու դերը հայոց պատմության մեջ: |
| **Վերջնարդյունք** |
| Գիտելիք |

| | |
|---|---|
| 9.2.1.Նկարագրի աշխարհաքաղաքական իրադրությունը, Հայաստանի և տարածաշրջանի ներքաղաքական և արտաքին քաղաքական իրավիճակը 1918-1920 թթ., տարածքային հիմնախնդիրները,<br>9.2.2. բացատրի հարաբերությունները հարևան և աշխարհի երկրների, ժողովուրդների, միջազգային տարբեր միությունների, կազմակերպությունների հետ, առաջարկի հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքային տարբերակներ, կանխատեսի դրանց հետևանքները:<br>Արժեհամակարգ- պետականություն<br>9.2.3. Ուսումնասիրի տվյալ ժամանակաշրջանի վերաբերյալ պատմական աղբյուրները և իրադարձությունները, ձևավորի բանիմաց վերաբերմունք պետականության արժեհամակարգի վերաբերյալ, որը ձևավորեց հայ ժողովուրդը հարյուրամյակներ պետականություն չունենալուց հետո:<br>Հմտություն-համագործակցում<br>9.2.4. Զույգերով, խմբերով ուսումնասիրի և վերլուծի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր՝ ձևավորելով համագործակցելու հմտություն: | |
| **Թեմայի բովանդակություն** | |
| 1. Աշխարհաքաղաքական իրադրությունը: Ներքաղաքական ու արտաքին քաղաքական իրավիճակը Հայաստանում և տարածաշրջանում:<br>2. Ռուսական հեղափոխություններն ու Հայաստանը: Ազգային-քաղաքական կյանքի վերելքը: Հայոց բանակի ստեղծումը:<br>3. Խորհրդային Ռուսաստանը և Հայկական հարցը: Բրեստ-Լիտովսկի հաշտությունը:<br>4. Անկախության վերականգնման ներքին և արտաքին նախադրյալները և գործընթացը: Թուրքական զորքերի ներխուժումն Այսրկովկաս և Հայաստան: Տրապիզոնի բանակցությունները:<br>5. Մայիսյան հերոսամարտերը: Հայաստանի Հանրապետություն հռչակումը: Բաթումի պայմանագիրը: Բաքվի գոյամարտը:<br>6. Հայաստանի Հանրապետության կայացումը: Ներքին դրությունը: Պետական մարմինների ձևավորումը: Բանակի ստեղծումը:<br>7. Հասարակական-քաղաքական կյանքը, սոցիալ-տնտեսական վիճակը, հասարակական հարաբերությունները առօրյա կյանքն ու կենցաղը Հայաստանի Հանրապետությունում:<br>8. Հայոց եկեղեցու գործունեությունը 1918-1920 թթ.:<br>9. Հայաստանի Հանրապետության տարածքային հիմնախնդիրները 1918-1920 թթ.: Հայ-վրացական պատերազմը: Պայքար Ադրբեջանի Հանրապետության նկրտումների դեմ:<br>10. Հայերի էթնիկ զտումների և ցեղասպանական քաղաքականությունը Ադրբեջանում 1918–1920 թթ:<br>11. Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը և միջազգային հարաբերությունները 1918-1920 թթ.: Փարիզի խորհրդաժողովը և Հայկական հարցը: Սևրի պայմանագիրը:<br>12. Թուրք-հայկական պատերազմը: Հայաստանի Հանրապետության անկումը:<br>13. Հայաստանի առաջին Հանրապետության կրթամշակութային ձեռքբերումները:<br>14. Հետադարձ կապ | |
| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |

| | |
|---|---|
| • սկզբնաղբյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն<br>• զանգվածային լրատվամիջոցներից, համացանցից ստացված տեղեկատվության վերլուծություն<br>• հիմնախնդիրների հետազոտում | **Համակարգ (Պետություն)**<br>Դիտարկել պետությունը որպես հասարակության միասնական քաղաքական համակարգ:<br>**Կառուցվածք և գործառույթ**<br>Պետական կառավարման կառուցվածքը և պաշտոնյաների գործառույթները<br>**Անհատական և մշակութային արտահայտում**<br>Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը |

**Միջառարկայական կապերը թեմայում**

**Համաշխարհային պատմություն** - XX դարի սկզբի միջպետական կառույցներ, աշխարհի երկրներ, կոնֆլիկտներ, հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր, փաստեր, ձեռքբերումներ և այլն:
**Աշխարհագրություն** - աշխարհի երկրներ՝ տարածք, բնակչություն. բնակլիմայական պայմաններ, բնական հարստությություններ և այլն, քարտեզների հետ աշխատանք:
**Հասարակագիտություն** - «Արժեքներ», «Մտածողություն, հուզական բանականություն և վարք», «Հետազոտական և կառավարչական հմտություններ», «Պետություն», «Պետություն և մշակույթ», «Պետություն և տնտեսություն», »Պետություն և քաղաքականություն» թեմաներ:
**Հայոց լեզու** - բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում, դրանց հիմնական գաղափարի ըմբռնում:
**Գրականություն** - գրողներ, բանաստեղծներ, ստեղծագործություններ:
**ՆԶՊ** - զենքեր, ռազմարվեստ, մարտավարություն,
**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, թատրոն, կիրառական արվեստ)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ**

Հ 1, Հ 2, Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 34, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46

**Թեմա 3**

**Խորհրդային Հայաստանը 1920-1991 թթ.** (24 ժամ)

**Նպատակ**

Աշակերտը կուսումնասիրի տարածաշրջանի և համաշխարհային քաղաքական իրադրության, խորհրդային շրջանում հայկական քաղաքակրթական զարգացման ընթացքն ու առանձնահատկությունները, գործիչներին: Կգնահատի Խորհրդային Հայաստանի

ձեռքբերումներն ու բացթողումները, տեղն ու դերը հայոց պատմության մեջ:

**Վերջնարդյունք**

Գիտելիք
9.3.1. Հետազոտի Հայաստանի խորհրդայնացման գործընթացը, Խորհրդային Հայաստանի քաղաքական, տնտեսական, մշակույթային և սոցիալական զարգացումները:
Արժեհամակարգ-կարողություն
9.3.2. Ուսումնասիրի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր, վերլուծի այն ձեռքբերումները, որոնք ստեղծվեցին և տեղի ունեցան Խորհրդային Հայաստանի տարիների:
Հմտություն-հետազոտական:
9.3.3. Ուսումնասիրի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր տարբեր մեդիա հարթակներից՝ ձևավորելով հետազոտական հմտություն:

**Թեմայի բովանդակություն**

1. Հայաստանի խորհրդայնացումը: Խորհրդային վարչակարգի հաստատումը Հայաստանում. իշխանության մարմինների ստեղծումը:
2. Խորհրդային Հայաստանի տարածքային հիմնախնդիրները 1920-1923 թթ.
3. Զանգեզուրի հերոսամարտը: Գարեգին Նժդեհ:
4. Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը:
5. «Լոռու չեզոք գոտու» և Ջավախքի հիմնախնդիրը:
6. Մոսկվայի և Կարսի պայմանագրերը: Հայկական հարցը Լոնդոնի, Լոզանի խորհրդաժողովներում:
7. Անհատի պաշտամունքի ձևավորումը ԽՍՀՄ-ում: Քաղաքական հալածանքներն ու զանգվածային բռնությունները:
8. Խորհրդային իշխանության քաղաքականությունը եկեղեցու նկատմամբ: Բռնություններ և հալածանքներ: Հայոց եկեղեցու գործունեության ժամանակավոր կասեցումը:
9. Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ աշխարհամարտին:
10. Կրթությունը, գիտությունը և մշակույթը Խորհրդային Հայաստանում:
11. Խորհրդահայ հասարակության առօրյա կյանքն ու կենցաղը, հասարակական հարաբերությունները:

**Արցախյան հիմնախնդիրը: Անկախացման ճանապարհին**

1. Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում:
2. Արցախյան հիմնախնդիրը և շարժման սկիզբը:
3. Համազգային շարժման ծավալումը: Սումգայիթի կոտորածները: 1988 թ. երկրաշարժը: Բաքվի կոտորածները: Հայերի բռնագաղթը: Խորհրդային բանակի և Ադրբեջանի գործողությունները ԼՂԻՄ-ում:
4. ՀՀ և ԼՂՀ անկախացման գործընթացը:
5. Հայոց Եկեղեցին նորանկախ պետության ստեղծման տարիներին:

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
| --- | --- |
| • սկզբնաղբյուրների հետ աշխատանք, | **Համակարգ (Պետություն)** |

| | |
|---|---|
| աղբյուրների ուսումնասիրություն<br>• զանգվածային լրատվամիջոցներից, համացանցից ստացված տեղեկատվության վերլուծություն<br>• հիմնախնդիրների հետազոտում | Դիտարկել պետությունը որպես հասարակութան միասնական քաղաքական համակարգ:<br>**Անհատական և մշակութային արտահայտում**<br>Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը<br>**Գիտատեխնիկական նորարարություն**<br>Դիտարկել գիտական և տեխնոլոգիական նվաճումների ու քաղաքակրթական ձեռբերումների ազդեցությունը կյանքի, հասարարական զարգացման և առաջընթացի վրա: |

| Միջառարկայական կապերը թեմայում |
|---|
| **Համաշխարհային պատմություն** - XX դարի միջպետական կառույցներ, աշխարհի երկրներ, կոնֆլիկտներ, հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, ձեռքբերումներ և այլն<br>**Աշխարհագրություն** - աշխարհի երկրներ՝ տարածք, բնակչություն. բնակլիմայական պայմաններ, բնական հարստություններ և այլն, քարտեզների հետ աշխատանք:<br>**Հասարակագիտություն** - «Արժեքներ», «Մտածողություն, հուզական բանականություն և վարք», «Հետազոտական և կառավարչական հմտություններ», «Պետություն», «Պետություն և մշակույթ», «Պետություն և տնտեսություն», «Պետություն և քաղաքականություն» թեմաներ<br>**Հայոց լեզու** - բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում, դրանց հիմնական գաղափարի ըմբռնում<br>**Գրականություն** - գրողներ, բանաստեղծներ, ստեղծագործություններ<br>**ՆԶՊ**- զենքեր , ռազմարվեստ, մարտավարություն,<br>**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր:<br>**Բնագիտամաթեմատիկական առարաներ** - հայտնագործություններ, նորարարություններ, ձեռքբերումներ |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| Հ 10, Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 34, Հ 35, Հ 36, Հ 45,Հ 46 |

| Թեմա 4 |
|---|
| **Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը արդի փուլում** (24 ժամ) |
| **Նպատակ** |

| |
|---|
| Աշակերտը կուսումնասիրի հայկական քաղաքակրթական զարգացման ընթացքն ու առանձնահատկությունները, վերլուծի դրանց արդյունքներն ու հետևանքները, ցույց տալ Հայոց երկու պետությունների տեղն ու դերը աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում, գնահատի ձեռքբերումներն ու բացթողումները: |
| **Վերջնարդյունք** |
| Գիտելիք<br>9.4.1. Նկարագրի Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական և ներքաղաքական իրավիճակը արդի շրջանում:<br>9.4.2. Բացատրի հարաբերությունները հարևան և աշխարհի երկրների, ժողովուրդների, միջպետական տարբեր միությունների, կազմակերպությունների հետ, գտնի արդի աշխարհի հետ բազմատեսակ կապեր, առաջարկի հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքային տարբերակներ, կանխատեսի դրանց հետևանքները:<br>9.4.3. Ներկայացնի և բացատրի անկախացման և պետականաշինության գործընթացները Հայաստանի և Արցախի Հանրապետություններում, ներքին և արտաքին մարտահրավերները, արտահայտի տեսակետներ հայոց երկու Հանրապետությունների և աշխարհում դրանց տեղի ու դերի վերաբերյալ, եզրահանգումներ անի ՀՀ և ԱՀ ներքաղաքական և միջազգային աշխարհաքաղաքական զարգացումների հեռանկարների վերաբերյալ:<br>Արժեհամակարգ- միասնություն<br>9.4.4. Ուսումնասիրի զանազան պատմական աղբյուրները և տեքստերը կձևավորի բանիմաց վերաբերմունք միասնություն արժեհամակարգի վերաբերյալ, որը երկու պետականությունների գոյատևման միակ գրավականն է:<br>Հմտություն-քննական վերլուծական<br>9.4.5. Ուսուումնասիրի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր, կվերլուծի այն տարբեր տեսանկյուններից՝ զարգացնելով վերլուծական մտածողությունը: |
| **Թեմայի բովանդակություն** |
| **Արցախյան ազատամարտը**<br>1. Ազատագրական պայքարի զինված փուլը (1990-1994 թթ.):<br>2. Արցախյան հիմնախնդրի միջազգայնացումը:<br>**Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության կայացման և ամրապնդման գործընթացը**<br>1. Հայաստանի Հանրապետության կայացման գործընթացը:<br>2. Արցախի Հանրապետության կայացման գործընթացը:<br>3. Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը:<br>4. Արցախի Հանրապետության արտաքին քաղաքականությունը:<br>5. Եկեղեցի-պետություն փոխհարաբերություններն արդի փուլում:<br>6. Հայկական մշակույթը արդի շրջանում:<br>7. Արդի հայ հասարակության առօրյա կյանքն ու կենցաղը:<br>8. Հետադարձ կապ |

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|

| | |
|---|---|
| • սկզբնաղբյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն<br>• զանգվածային լրատվամիջոցներից, համացանցից ստացված տեղեկատվության վերլուծություն<br>• հիմնախնդիրների հետազոտում<br>• ֆիլմերի դիտում և քննարկում | **Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում**<br>Դիտարկել հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա:<br>**Անհատներ և հարաբերություններ**<br>Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: |

| |
|---|
| **Միջառարկայական կապերը թեմայում** |
| **Համաշխարհային պատմություն** - XX դարի և XIX դարի սկզբի միջպետական կառույցներ, աշխարհի երկրներ, կոնֆլիկտներ, հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, ձեռքբերումներ և այլն<br>**Աշխարհագրություն** - աշխարհի երկրներ՝ տարածք, բնակչություն․ բնակլիմայական պայմաններ, բնական հարստությություններ և այլն, քարտեզների հետ աշխատանք<br>**Հասարակագիտություն** - «Արժեքներ», «Մտածողություն, հուզական բանականություն և վարք», «Հետազոտական և կառավարչական հմտություններ», «Պետություն», «Պետություն և մշակույթ», «Պետություն և տնտեսություն, «Պետություն և քաղաքականություն» թեմաներ:<br>**Հայոց լեզու** - բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում:<br>**Գրականություն** - գրողներ, բանաստեղծներ, ստեղծագործություններ:<br>**ՆԶՊ** - զենքեր , ռազմարվեստ, մարտավարություն:<br>**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, թատրոն, կինո, կիրառական արվեստ)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր:<br>**Բնագիտամաթեմատիկական առարկաներ** - հայտնագործություններ, նորարարություններ, ձեռքբերումներ: |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| Հ 10, Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 23, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 34, Հ 35,<br>Հ 36, Հ 45,Հ 46 |

| |
|---|
| **Թեմա 5** |
| **Հայկական սփյուռքը ձևավորումից մինչ մեր օրերը** (12 ժամ) |

| Նպատակ |
|---|
| Աշակերտը կուսումնասիրի հայկական սփյուռքի ձևավորման և զարգացման ընթացքը, տարբեր ժամանաներում հայրենիք - սփյուռք կապերը, հարաբերությունները, առանձնահատկությունները: Կարժևորի ազգային հիմնախնդիրների լուծման ուղղությամբ Սփյուռքի գործունեությունը, ընբռնել և գնահատել Սփյուռքի դերն ու նրա հետ համագործակցությունը: |
| **Վերջնարդյունք** |
| Գիտելիք<br>9.4.1. Նկարագրի և բացատրի սփյուռքի առաջացման պատճառները, պատմական պայմանները, ընթացքը, սփյուռքահայերի առջև ծառացած խնդիրները, սփյուռքահայ խոշոր կենտրոնները, դրանց առանձնահատկությունները, 1990 ական թթ. զանգվածային արտագաղթի հետևանքով նոր ձևավորված համայնքները, արժևորի Հայոց եկեղեցու դերը սփյուռքահայության կյանքում, հայապահպան գործունեությունը:<br>Հմտություն- համագործակցում<br>9.4.2. Զույգերով կամ խմբային աշխատանքի միջոցով վերլուծի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր՝ ձևավորելով համագործակցելու հմտություն:<br>Արժեհամակարգ-ինքնություն<br>9.4.3. Ուսումնասիրի  և վերլուծի զանազան պատմական աղբյուրները և տեքստերը, ձևավորի բանիմաց վերաբերմունք ինքնություն արժեհամակարգի վերաբերյալ, որը հայկական սփյուռքի գոյատևման գրավականն է: |
| **Թեմայի բովանդակություն** |
| 1. Հայկական սփյուռքի ձևավորումը, պայմանները, մարտահրավերները, խոշոր կենտրոնները:<br>2. «Ազգային օջախի» և հայ գաղթականության խնդիրը Ազգերի լիգայում:<br>3. Սփյուռքի և Խորհրդային Հայաստանի հարաբերությունները: Սփյուռքահայերի հայրենադարձությունը, փուլերը, արդյունքները:<br>4. 1990-ական թթ. զանգվածային արտագաղթը և Սփյուռքի ստվարացումը: Սփյուռքի հիմնական կենտրոնները և նոր համայնքներն այսօր:<br>5. Հայ առաքելական եկեղեցին հայապահպանության գործում:<br>6. Սփյուռքահայերի պայքարը Հայկական հարցի լուծման և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և հայապահպանության համար:<br>7. Հայրենիք - Սփյուռք հարաբերությունների ամրապնդումը և զարգացումը: Սփյուռքահայ երիտասարդության արդի խնդիրները:<br>8. Սփյուռքահայ մշակույթը, համաշխարհային ձեռքբերումներ: Սփյուռքահայ նշանավոր գործիչներ:<br>9. Հետադարձ կապ: |

| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|
| • սկզբնաղբյուրների հետ աշխատանք,<br>• զանգվածային լրատվամիջոցներից, համացանցից ստացված | **Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում**<br>Դիտարկել հասարակությունների և |

| | |
|---|---|
| տեղեկատվության վերլուծություն<br>• հիմնախնդիրների հետազոտում<br>• նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, | համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա:<br>**Գիտատեխնիկական նորարարություն**<br>Դիտարկել գիտական և տեխնոլոգիական նվաճումների ու քաղաքակրթական ձեռքբերումների ազդեցությունը կյանքի, հասարարական զարգացման և առաջընթացի վրա: |

| |
|---|
| **Միջառարկայական կապերը թեմայում** |
